Լ.Ա. Ավագյան

ՏԻԳՐԱՆ ՉՐԲԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԼԵՎՈՆ ԱՎԱԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՋՐԲԱՇՅԱՆ

(ԵՐԿՐԱԲԱՆ – ՄԱՆԿԱՎԱՐԺԸ)

ՄԱԿՄԻԼԱՆ ԱՐՄԵՆԻԱ

ԵՐԵՎԱՆ • 2004

Լ. Ա. Ավագյան

Տիգրան Զրբաշյան, երկրաբան-մանկավարժը

Գրքույկը համառոտ ակնարկ է՝ նվիրված Հայաստանի երկրաբանական ծառայության ավագ սերնդի մեծ երախտավոր, Երևանի պետական համալսարանի աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետի հիմնադիր, պրոֆեսոր Տիգրան Զրբաշյանի կյանքին ու գիտամանկավարժական գործունեությանը: Այն գրված է արխիվային նյութերի, ինչպես նաև հեղինակի և նարն ճանաչողների անձնական հիշողությունների հիման վրա:

Երկրորդ, լրամշակված հրատարակություն

ISBN 99930-72-98-2

Քարեր, քարեր Հայաստանի,
Սարերն ի վար հոսող քարեր,
Երկինքն ի վեր խոսող քարեր
Ես ձեր երգն եմ երգում նորից

Հ ՍԱՀՅԱՆ

Պրոֆեսոր Տիգրան Զրբաշյան
(1889-1937)

Տիգրան Արշակի Զրբաշյանը ծնվել է 1889թ. նոյեմբերի 9-ին (22), Վանում, երկրագործի ընտանիքում: Տարրական կրթությունն ստացել է Էրզրումի (Կարին) Արծնյան վարժարանում (1896-1902), միջնակարգը՝ Վանի Երեմյան վարժարանում (1902-1906) և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1908-1912):

Տիգրան Զրբաշյանի մանկավարժական գործունեությունն սկսվել է 1913թ., երբ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո վերադառնում է իր ծննդավայրը և նշանակվում Վանի Հայկազյան Կենտրոնական վարժարանի ուսուցիչ: Այստեղ նա հանդես է բերում բացառիկ նվիրվածություն դեպի դպրոցն ու աշակերտությունը: Հենց այստեղ էլ ստանալով իր մանկավարժական մկրտությունը, նա որոշում է իր հետագա ամբողջ գործունեությունը նվիրաբերել կրթության և մշակույթի բնագավառներին: Առաջին իսկ ուսումնական տարում նա դառնում է սիրված ուսուցիչ-դաստիարակ: Տ.Զրբաշյանի աշակերտներից էր Հայաստանի պետական-կուսակցական ակնավոր գործիչ Աղասի Խանջյանը, որն իր իսկ խոստովանությամբ՝ խոր գիտելիքներով պարտական էր իր ուսուցչին:

1915 թվականի մեծ եղեռնից հրաշքով փրկված Զրբաշյանների ընտանիքը (հայրը, մայրը, ինքը, եղբայրը և քույրը) գաղթում է Արևելյան Հայաստան:

1915-1918 թվականներին Տ.Զրբաշյանը ուսուցչություն է անում նախ Աշտարակի որբանոց-դպրոցում, իսկ այնուհետև՝ Թիֆլիսի Հայկազյան բարեգործական ընկերության և Ներսիսյան դպրոցին առընթեր որբանոց-դպրոցներում: Ծնողական գուրգուրանք է դրսևորում որբ սաների նկատմամբ, նրանց մեջ սերմանում սեր դեպի գիրն ու գրականությունը, հայրենի բնությունը, կազմակերպում է զրույցներ և էքսկուրսիաներ:

1916 թվականին Զրբաշյանների ընտանիքը տեղափոխվում է Թիֆլիս: Այստեղ Տ.Զրբաշյանն ուսուցչություն է անում Հայկական բարեգործական

ընկերության որբանոց-դպրոցում (1916-1917) և Ներսիսյան դպրոցին առընթեր գաղթականական որբանոց-դպրոցում (1917-1918):

Նախախորհրդային մանկավարժական գործունեությունը կարևոր նշանակություն ունեցավ Տ.Զրբաշյանի համար: Հայկական դպրոցներում դասավանդելով մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և բնագիտություն առարկաները, նա խորացավ այդ գիտությունների մեջ, մի բան, որը նրան շատ օգնեց հետագա ուսումնառության տարիներին: Բացի այդ, ամենօրյա շփումը որբ սաների և գաղթականների հետ նրա մեջ խորացրին մարդկային լավագույն գծեր: Զրբաշյանի վրա իրենց բարերար ազդեցությունն ունեցան նաև Ներսիսյան դպրոցի ուսուցիչները, պաշտոնակիցները, Թիֆլիսի մտավորականության առաջադեմ ներկայացուցիչներն ու ընկերները:

Այդ տարիներին Տ.Զրբաշյանը զբաղվում է ինքնազարգացմամբ, կատարելագործում է դասավանդման գործը, մշակում իր մանկավարժական մեթոդը, որը ցայտուն կերպով դրսևորվեց Երևանի պետական համալսարանում նրա աշխատելու տարիներին:

Մանկավարժական աշխատանքին զուգընթաց, 1917-1920 թվականներին Զրբաշյանը սովորում է Թիֆլիսի Անդրկովկասյան համալսարանում և միաժամանակ աշխատում պոլիտեխնիկական ինստիտուտի հանքաբանության կաբինետում՝ «քարերի աշխարհում»: Անվանի պրոֆեսոր Գինզբերգը ուսանող-լաբորանտ Տիգրանին, իր ընդունակ «օգնականին», մասնակից է դարձնում իր դասախոսություններին և գործնական պարապմունքներին, որոնք և կանխորոշում են Տ.Զրբաշյանի ապագան:

Եվ ահա 1920թ. նա մեկնում է Փարիզ և ընդունվում Սորբոնի համալսարանը: Այստեղ նա ունկնդրում է ֆիզիկամաթեմատիկական առարկաների գծով մի շարք դասախոսություններ (լսել է Ալբերտ Էյնշտեյնին և Մարիա Սկլադովսկայա-Կյուրիին), այնուհետև փոխադրվում Փարիզի հանքաբանական ինստիտուտը, որն ավարտում է 1925թ. և ստանում է լեռնային ինժեներ-հանքաբանի կոչում:

Երկրաբանական գիտությունների և մանկավարժական մեթոդների մեջ կատարելագործվելու նպատակով նա շարունակում է ունկնդրել Սորբոնի համալսարանի խոշորագույն մանկավարժ-գիտնականների մասնագիտացված դասընթացները (կիրառական երկրաբանություն, բյուրեղագիտություն, հանքաբանություն, ապարագրություն, հետազոտման մեթոդներ և այլն) և միաժամանակ աշխատում է Փարիզի երկրաբանական թանգարաններում:

Երկու տարվա (1924-1925) աշխատանքը Փարիզի նշանավոր բնապատմական թանգարանում, ինչպես նաև հանքաբանական դպրոցի հան-

քաբանական և հնէաբանական թանգարաններում բացառիկ նշանակություն ունեցավ նրա մանկավարժական-մասնագիտական հայացքների ձևավորման գործում: Ուշագրավ է, որ Տ.Զրբաշյանը Փարիզում ուսանելու և աշխատելու տարիներին այնքան էր խորացել երկրաբանական մի շարք առարկաների և գիտելիքների բնագավառում, որ բարձր կուրսի ուսանողները քննությունների նախօրեին հաճախ դիմում էին նրա օգնությանը, իսկ պրոֆեսորները նրան էին վստահում անցկացնելու իրենց լաբորատոր պարապմունքները:

Պրոֆեսոր Տիգրան Արշակի Զրբաշյան
1989-1937

Մոտիկից շփվելով ժամանակի մանկավարժ-գիտնականներ ակադեմիկոս Ա.Լաքրուայի, պրոֆեսորներ Է.Օգի, Պ.Բոննեի և այլոց հետ (նրանք շատ բարձր էին գնահատում Տ.Զրբաշյանի արտակարգ ընդունակություններն ու աշխատասիրությունը, փայլուն ապագա գուշակում նրան), շատ բան սովորեց նրանցից և հետագայում այդ ամենը շռայլորեն վերադարձրեց իր սաներին:

Փարիզից Տ.Զրբաշյանը նամակագրական կապ էր պահպանում հարազատների և ընկերների հետ: Նա մեծ ուրախություն էր ապրում այն հաջողությունների համար, որ ձեռք էր բերում Խորհրդային Հայաստանը ժողովրդական տնտեսության, գիտության և մշակույթի բնագավառներում: Առանձնահատուկ ուշադրությամբ էր հետևում այն միջոցառումներին, որոնք վերաբերվում էին բարձրագույն կրթության, երկրաբանական և հանքաբանական ծառայության կազմակերպմանը, տարբեր երկրներում ու վայրերում ցրված հայ մտավորականության առաջադեմ ներկայացուցիչներին Հայաստան հրավիրելու գործին:

Տիգրան Զրբաշյանին առաջարկում են Փարիզում մի շարք մանկավարժական և գիտական պաշտոններ, իսկ Հաբեշստանի նահանգապետն իր որդու միջոցով, որը Տիգրանի համակուրսեցին էր, հրավիրում է նրան երկրաբանության և հանքաբանության գծով կառավարական խորհրդա-

տու: Անշուշտ, հրապուրիչ առաջարկներ էին: Սակայն հաղթում է հայրենիքին և հարազատ ժողովրդին ծառայելու նվիրական գաղափարը:

1925թ. վերջերին Զրբաշյանը վերադառնում է Երևան: Նրա անունն արդեն հայտնի էր որպես հմուտ դասախոս ու հանքաբան- ինժեներ և նրա կարիքը խիստ զգացվում էր:

1926թ. սկզբներին աշխատանքի է հրավիրվում Երևանի պետական համալսարան, որպես ընդհանուր երկրաբանություն, բյուրեղագիտություն և հանքաբանություն առարկաների դասախոս: Հարկ է նշել, որ երկրաբանական առարկաներ դասավանդվել են բնագիտական, գյուղատնտեսական և տեխնիկական ֆակուլտետներում համալսարանի հիմնադրման առաջի իսկ տարիներից: Այսպես, ընդհանուր երկրաբանության դասընթացը 1921 թվականից կարդացել է Կ.Ն.Սավիչ-Զաբլոցկին, իսկ բյուրեղագիտության և հանքաբանության դասընթացները՝ 1922 թվականից Սիրան (Հերիք) Տիգրանյանը: Այնպես որ Տ.Զրբաշյանը միանգամից դատարկ տեղում չսկսեց իր դասախոսական աշխատանքը, սակայն սկզբից ևեթ նա մեծ դժվարությունների հանդիպեց բարձրորակ մասնագետ կադրերի և նյութատեխնիկական բազայի լիակատար բացակայության պատճառով: Չկային համապատասխան կաբինետներ և լաբորատորիաներ, ուսուցումը կատարվում էր առանց ուսումնաարտադրական ծրագրերի, ուսումնական ձեռնարկների և դասագրքերի: 1929թ. նրան շնորհվում է դոցենտի կոչում:

Դասախոսական աշխատանքին զուգընթաց Տիգրան Զրբաշյանը ձեռնամուխ է լինում ուսումնանյութական բազան ամրապնդելու, ընդլայնելու և զարգացնելու գործին:

Լինելով երկրաբանական առարկաների միակ դասախոսը (Կ.Սավիչ-Զաբլոցկին և Ս.Տիգրանյանը թողել էին դասախոսական աշխատանքը), նա առաջին հերթին կազմում է ընդհանուր երկրաբանության, բյուրեղագիտության, հնէաբանության և հանքաբանության տեսական ու գործնական պարապմունքների ծրագրեր: Օգնության են գալիս Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտում, Սորբոնի համալսարանում ու Փարիզի հանքաբանական ինստտուտում և մի քանի թանգարաններում ուսանելու և աշխատելու ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ինչպես նաև Խորհրդային Միության մի շարք քաղաքների (Մոսկվա, Լենինգրադ, Նովոչերկասկ, Բաքու, Թիֆլիս և այլն) ուսումնական և գիտական հաստատությունների փորձն ու անվանի երկրաբան-մանկավարժների (Ե.Միլանովսկի, Վ.Լուչիցկի, Վ.Լոդոչնիկով, Ա.Բոլդիրև, Վ.Բոգաչով, Ա.Զանելիձե և ուրիշներ) դասագրքերն ու ձեռնարկները: Տ.Զրբաշյանի կազմած ծրագրերի առանձնահատկությունն այն էր, որ բացի ընդհանուր տեսական ու գործնական առարկայական դա-

սընթացների նյութից, համապատասխանաբար օգտագործված էին նաև Հայաստանի երկրաբանության առավել հետաքրքրական հարցերն ու օրինակները:

Մենք արդեն ասացինք, որ բյուրեղագիտական-հանքաբանական առարկաների դասավանդման ու գործնական պարապմունքների կազմակերպման համար չկար համապատասխան կաբինետ, և ուսուցման ընթացքում օգտագործվում էին համալսարանի բնապատմական թանգարանի երկրաբանական-հանքաբանական բաժնի հավաքածուները (դրանց հիմնական մասը կազմում էին Մոսկվայի նախկին Լազարյան ճեմարանի և Երևանի թանգարանի մասնագիտական բաժինների նյութերը), որոնք, սակայն, բավարար չէին: Եվ ահա Տ.Զրբաշյանը նախաձեռնում է բյուրեղագիտության և հանքաբանության կաբինետ ստեղծելու գործը: Առաջին հերթին հարկ էր կաբինետն ապահովել քարային հավաքածուներով, ցուցանմուշներով և գծագրական նյութերով: Այդ նպատակով նա Մոսկվայի և Լենինգրադի ուսումնական և գիտական հաստատությունների միջոցով կազմակերպում և ձեռք է բերում հանքաբանական և մասամբ՝ բյուրեղագիտական ուսումնական հավաքածուներ (քարային նմուշներ, բյուրեղների պարզ և կոմբինացիոն մոդելներ, աղյուսակներ և այլն): Այդ ամենը նա լրացնում էր իր դաշտային աշխատանքների ընթացքում հավաքած «հայկական նմուշներով»: Սակայն լիարժեք կաբինետի համար չկային կամ անբավարար էին ուսումնագործնական ցուցադրական նյութերը, բևեռացնող մանրադիտակները, մասնագիտական սարքերն ու գործիքները, որոնք տեղում ձեռք բերել հնարավոր չէր: Տ.Զրբաշյանը դիմում է ՀԽՍՀ լուսժողկոմատին ու Հայաստանի կառավարությանը՝ անձամբ ժողկոմխորհի նախագահ Ս.Տեր-Գաբրիելյանին (Ս.Տեր-Գաբրիելյանը մոտիկից ճանաչում էր Տ.Զրբաշյանին և բարձր գնահատում նրան), ում օգնությամբ հաջողվում է Փարիզից ստանալ ուսումնական շատ նյութեր և սարքեր:

Բյուրեղագիտական-հանքաբանական կաբինետ հիմնելուց հետո Տ.Զրբաշյանը ձեռնարկում է ընդհանուր երկրաբանության կաբինետ ստեղծելու գործը:

Հետևյալ անհետաձգելի հարցը, որին ձեռնամուխ է լինում Տ.Զրբաշյանը, մասնագիտական ուսումնաօժանդակ կադրերի (ասիստենտ, լաբորանտ, պրեպարատոր) պատրաստման հարցն էր: Արդեն 1928-1929 ուսումնական տարում նա համալսարանի միակ երկրաբան դասախոսն էր: Երկրաբան Պետրոս Ղամբարյանը թողել էր դասախոսական աշխատանքը և նշանակվել համալսարանի քանակական անալիզի քիմիական լաբորատորիայի վարիչ: Երկրաբանական առարկաներ էին դասավանդվում նաև հա-

մալսարանի մանկավարժական, գյուղատնտեսական ու տեխնիկական ֆակուլտետներում, որի պատճառով Տ.Զրբաշյանը գերբեռնված էր: Նա հանքաբանության և երկրաբանության կաբինետների վարիչն էր ու միաժամանակ զբաղված էր գիտահետազոտական աշխատանքներով: Այնպես որ մասնագիտական կադրերի պատրաստման հարցը խիստ հրատապ էր:

Տիգրան Զրբաշյանի պատրաստած առաջին մասնագետը համալսարանի կենսաբանության բաժնի շրջանավարտ Շուշանիկ Շատվորյանն էր: Հաշվի առնելով Շատվորյանի բացառիկ սերը դեպի երկրաբանությունը, 1929թ. նրան վերցնում է որպես լաբորանտ, իսկ 1930թ. վստահում կաբինետի վարիչի պաշտոնը, մասնակից դարձնում իր դասախոսություններին և գործնական պարապմունքներին: Եվ ահա 1934թ. Շ.Շատվորյանն արդեն աշխատում է որպես ընդհանուր երկրաբանության ամբիոնի ասիստենտ:

Ուսանողների լաբորատոր և գործնական պարապմունքները բարձր մակարդակով կազմակերպելու համար Տ.Զրբաշյանը ստեղծում է բյուրեղագիտական արհեստանոց:

Տիգրան Զրբաշյանի մանկավարժական աշխատանքը չի սահմանափակվել միայն համալսարանով: 1930թ., երբ համալսարանի առանձին ֆակուլտետների հիմքի վրա ստեղծվում են ինքնուրույն ինստիտուտներ, նա երկրաբանական դասընթացներ է անցկացնում նաև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական և շինարարական ֆակուլտետներում:

Հաշվի առնելով Տ.Զրբաշյանի գիտամանկավարժական բեղմնավոր գործունեությունը, 1935 թվականին նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում:

Պրոֆեսոր Տիգրան Զրբաշյանի հետագա գիտամանկավարժական ամբողջ գործունեությունը կապված է Երևանի պետական համալսարանի և վերջինիս աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետի հետ:

1934 թվականին, երբ Տ.Զրբաշյանի նախաձեռնությամբ ականավոր երկրաբան, պրոֆեսոր Հովհաննես Կարապետյանի (1875-1943) և համալսարանի ռեկտոր, դոցենտ Տիգրան Մուշեղյանի (1886-1935) անմիջական օգնությամբ Երևանի պետական համալսարանում ստեղծվում է աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետ, Տ.Զրբաշյանը նշանակվում է այդ ֆակուլտետի դեկան և ընդհանուր երկրաբանության ամբիոնի վարիչ:

Ազգային մասնագետ կադրեր պատրաստելու խնդիրը պայմանավորված էր հանրապետության երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների ուսումնասիրման, հանքարդյունաբերության բուռն զարգացման և երկրաբանական ծառայության ծավալման անհետաձգելի պահանջներով:

Համալսարանի նորաբաց ֆակուլտետի երկրաբանական բաժնի առաջին կուրս է ընդունվում հիսուն հոգի: Միաժամանակ ստեղծվում է նաև երկրորդ կուրս, ուր իրենց ցանկությամբ փոխադրվում են համալսարանի և պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական ֆակուլտետներից քսանչորս ուսանողներ (մեծ մասը Երևանի հանքագործական տեխնիկումի նախկին շրջանավարտներ):

Սեպտեմբերի 1-ին Տ.Զրբաշյանի նախաձեռնությամբ ռեկտորատը հրավիրում է ֆակուլտետի երկրաբանական բաժնի առաջին և երկրորդ կուրսի ուսանողների խորհրդակցություն: Բացման խոսքով հանդես է գալիս ռեկտոր Տ.Մուշեղյանը, որն ուսանողներին շնորհավորելուց և հաջողություններ մաղթելուց հետո ներկայացնում է Տ.Զրբաշյանին. «Այսուհետև ձեր ուսուցիչը և դաստիարակը, ինչպես նաև ֆակուլտետի դեկանը լինելու է սքանչելի Մարդ, հարգարժան պրոֆեսոր Տիգրան Զրբաշյանը, - ասում է նա: Սիրեք ու հարգեք նրան, սովորեք գերազանց և եղեք օրինակելի, նմանվեք այս բյուրեղյա մարդուն, որն իր կյանքը նվիրաբերում է ազգային մասնագիտական կադրերի պատրաստման ու Հայաստանում երկրաբանական գիտության ու հանքաբանության զարգացման պատվավոր ու դժվարին գործին»:

Տիգրան Զրբաշյանը բյուրեղագիտություն առարկայի դասախոսության ժամանակ

Այնուհետև ելույթ է ունենում պրոֆեսորը: Նա մանրամասն կանգ է առնում երկրաբանության դերի ու նշանակության վրա, շոշափում Հայաստանի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների ուսումնասիրության հարցերը, ուսանողների առջև դրված խնդիրները և այլն:

Ֆակուլտետի ստեղծման առաջին իսկ օրից Տ.Զրբաշյանը բախվեց լուրջ դժվարությունների: Ուսումնաարտադրական պրոցեսի կազմակերպման և բարձրորակ կադրերի պատրաստման գործին մեծ չափով խոչընդոտում էին պրոֆեսորադասախոսական և օժանդակ կազմի խիստ պակասը, ուսումնական և արտադրական պրակտիկայի կազմակերպման դժվարությունները: Ուսումնական գործին խանգարում էին համապատասխան լաբորատորիաների և կաբինետների պակասը, մասնագիտական սարքերի ու գործիքների, ինչպես նաև անհրաժեշտ ցուցադրական նյութերի՝ հավաքածուների, քարտեզների, աղյուսակների ու գծագրերի և հատկապես մայրենի լեզվով ձեռնարկների բացակայությունը:

Ահա այստեղ է, որ դրսևորվում է Տ.Զրբաշյանի ոչ միայն գիտամանկավարժական, այլև վարչական և կազմակերպչական տաղանդը: Նա, իր շուրջը համախմբելով ֆակուլտետի աշխարհագրական և երկրաբանական բաժինների հիմնադիր դասախոսներ, պրոֆեսորներ Հայրապետ Հովհաննիսյանին և Ստեփան Լիսիցյանին, ավագ դասախոսներ Հարություն Թերզիբաշյանին, Պարույր Հովհաննիսյանին և ասիստենտ Շուշանիկ Շատվորյանին, մեծ աշխատանք է ծավալում ֆակուլտետը դասախոսական կադրերով համալրելու, նյութատեխնիկական բազա ստեղծելու և ուսումնաարտադրական պրոցեսը բարձր մակարդակով կազմակերպելու համար: Կարճ ժամանակամիջոցում լրացվում և հարստացվում է բյուրեղագիտական-հանքաբանական կաբինետը, որն ստեղծվել էր համալսարանի հիմնադրման առաջին տարիներին:

1935թ. Տ.Զրբաշյանի նախաձեռնությամբ և դասախոսներ Հ.Թերզիբաշյանի ու Շ.Շատվորյանի անմիջական մասնակցությամբ ստեղծվում են հնէաբանության և ապարագրության կաբինետներ: Կաբինետների ուսումնական հավաքածուների և ցուցանմուշների մի զգալի մասը ձեռք են բերվում Մոսկվայի, Լենինգրադի և Միության մի շարք այլ քաղաքների երկրաբանական, գիտական և ուսումնական հաստատությունների միջոցով, իսկ մնացածը լրացվում է Տ.Զրբաշյանի կատարած գիտահետազոտական և հետախուզական աշխատանքների ընթացքում հավաքած արժեքավոր նմուշներով:

Տ.Զրբաշյանի ջանքերով ձեռք են բերվում բևեռացնող մանրադիտակներ, մասնագիտական սարքեր և ուսումնացուցադրական նյութեր (երկրա-

բանական քարտեզներ և կտրվածքներ, աղյուսակներ, երկրաբանական պրոցեսներ վերարտադրող գծագրեր, դիապոզիտիվներ և այլն):

Բյուրեղագիտության առարկայի գծով ստեղծված բյուրեղագիտական արհեստանոցն ընդարձակում է իր գործունեությունը: Այսեղ պրեպարատոր Հ.Ճռիկյանը (վարպետ Հարություն) պրոֆեսոր Տ.Զրբաշյանի ղեկավարությամբ փայտից, թիթեղից և մետաղալարից պատրաստում է բյուրեղների պարզ ու կոմբինացիոն ձևերի և բյուրեղային ցանցերի գունավոր մոդելներ: Այդ մոդելներով էլ մինչև օրս ուսանողները սովորում և յուրացնում են բյուրեղագիտության դասընթացը:

Տ.Զրբաշյանը մեծ աշխատանք է կատարում ուսումնական պլանի և մասնագիտական առարկաների ծրագրերի բարեփոխման ուղղությամբ, զգալի տեղ հատկացնելով գործնական և լաբորատոր պարապմունքներին, ուսումնական և արտադրական պրակտիկային և մի շարք մասնագիտացված դասընթացներին: Նոր ծրագրերի առանձնահատկությունն այն էր, որ բացի ընդհանուր տեսական և գործնական դասընթացների նյութից համապատասխան բաժիններում օգտագործվել էին Հայաստանի երկրաբանության առավել հետաքրքիր հարցերն ու օրինակները (հրաբխականություն, հրային ապարներ, երկրաշարժեր, երրորդականի նստվածքների շերտագրություն և այլն):

Տ.Զրբաշյանը հատուկ ուշադրություն էր դարձնում ուսումնական և արտադրական պրակտիկայի կազմակերպմանն ու արդյունավետ անցկացմանը: 1935-1937 թվականների ամռան ամիսներին նա ղեկավարում է ապագա երկրաբանների առաջին ուսումնական դաշտային պրակտիկան: Պրակտիկայի վայր ընտրելով երկրաբանական տեսակետից շատ հետաքրքիր և ուսանելի Մերձերևանյան շրջանը (ուր նա մի շարք տարիներ կատարում էր գիտահետազոտական և հետախուզական աշխատանքներ) ասիստենտ Շ.Շատվորյանի և դասախոս Պ.Հովհաննիսյանի հետ նա ուսանողներին տանում էր Հրազդան և Ազատ գետերի ավազանների առավել հետաքրքիր երթուղիներով (Բջնի-Արզական-Նուռնուս-Արզնի-Գետամեջ-Քանաքեռ և Շորաղբյուր-Ողջաբերդ-Շորջրիձոր-Հացավան-Գառնի-Գեղարդ), ծանոթացնելով նրանց դաշտային հետազոտման մեթոդներին և երկրաբանական հանույթի հիմունքներին, քարտեզների ու կտրվածքների կազմման և քարային նյութերի մշակման սկզբունքներին:

Պրակտիկայի վայրը երկրաբանական առումով դասական մի շրջան է, որն ունի շատ հետաքրքիր երկրաբանական կառուցվածք, երրորդական հասակի շերտախմբերի մեծ տարածում և հարուստ՝ բրածո ֆաունա ու ֆլորա: Ամենայն իրավմամբ մինչև օրս էլ այն դասվում է ոչ միայն մեր հանրա-

Տ. Զրբաշյանը համլսարանի ուսանողների հետ դաշտային պրակտիկայի ժամանակ (ձախից վերևում, նստած, մուրճը ձեռքին)

պետության, այլև Միության ամենահետաքրքիր երկրաբանական շրջանների շարքը և դարձել է ուսանողների պրակտիկայի անցկացման, գիտահետազոտական և երկրաբանական-հետախուզական աշխատանքների ծավալման շրջան:

Տիգրան Զրբաշյանի վարչական, գիտական, կազմակերպչական և հասարակական գործունեության ոլորտում հատուկ տեղ է գրավել մանկավարժական, դասախոսական բնագավառը: Համապատասխան դասախոսական կադրերի պակասի պայմաններում նա մեծ վարպետությամբ դասավանդել է ընդհանուր երկրաբանություն, բյուրեղագիտություն, հանքաբանություն, ապարագիտություն, հետազոտման մեթոդներ և այլն: Նա տիրապետում էր մի շարք լեզուների և դա օգնում էր նրան օգտվելու օտարալեզու մասնագիտական գրականությունից:

Անհնար էր նրա դասախոսությունները լսել չկլանված: Որն էր հաջողության գրավականը: Մասնագիտական խորությունը, հռետորի ձիրքը, սերը գիտության հանդեպ: Թերևս այդ բոլորը միասին: Նրա խոսքը գիտական էր, միաժամանակ պատկերավոր, պարզ ու հասկանալի: Դասախոսություն-

ների ժամանակ հաճախ նկարչի կամ գեղագրի վարպետությամբ նկարում, գծագրում կամ ուղղակի գրում էր գրատախտակին, ասելիքը դարձնելով պատկերավոր և դյուրըմբռնելի: Ի տարբերություն շատ դասախոսների, միշտ ներկա էր գտնվում իր կարդացած դասընթացների գործնական և լաբորատոր ժամերին, որոնք մեծ հմտությամբ վարում էր ասիստենտ Շ.Շատվորյանը: Դրանով նա հետևում էր ոչ միայն կարդացած նյութի ուսուցման ու յուրացման ընթացքին, այլև օգնում էր ասիստենտին և ուսանողներին:

Տիգրան Զրբաշյանին շարունակ զբաղեցնում էր համալսարանի համար մանկավարժական կադրերի պատրաստման հարցը: Ինչպես նշվեց, երկրաբանության գծով նրա պատրաստած առաջին դասախոսը Շուշանիկ Շատվորյանն էր (1907-1979), որը 1934-1937 թթ. աշխատել է պրոֆեսոր Տ.Զրբաշյանի մոտ որպես ընդհանուր երկրաբանության ամբիոնի ասիստենտ: Սկսած 1937թ. մինչև իր կյանքի վերջին օրերը նա որպես դոցենտի պաշտոնակատար երկրաբանական ֆակուլտետում դասախոսել է բյուրեղագիտության, հանքաբանության և պետրոգրաֆիայի դասընթացները: Զրբաշյանը քաջ գիտակցում էր, որ երկրաբանության գծով դասախոսական կադրերի պատրաստման հարցը առաջին հերթին պետք է լուծել ֆակուլտետի շրջանավարտների միջոցով: Նա ուշադրությամբ հետևում էր առավել ընդունակ և աշխատասեր ուսանողներին, մեծ հույսեր կապելով նրանց հետ: Նրա մահից մեկ տարի անց՝ 1938 թվականին, երկրաբանական բաժնի առաջին շրջանավարտներից երեքը՝ Ա.Գաբրիելյանը, Վ.Հասրաթյանը և Թ.Թադևոսյանը գործուղվում են Մոսկվա և ասպիրանտուրան ավարտելուց հետո վերադառնում ու դառնում համալսարանի երկրաբանության բաժնի, իսկ հետագայում՝ երկրաբանական ֆակուլտետի դասախոսական առաջին կադրերը:

Տ.Զրբաշյանի աշակերտներից շատերը ներկայումս գիտության և արտադրության ճանաչված գործիչներ են: 1935-1937 թթ. նա եղել է Հայաստանի երկրաբանության բնագավառի առաջին ասպիրանտներ Սուրեն Մովսիսյանի (մետաղածնության գծով) և Ստեփան Լուսյանի (հրաբխականության գծով) գիտական ղեկավարը:

Տ.Զրբաշյանի գիտամանկավարժական գործունեությունը չի սահմանափակվել միայն դասախոսական պրակտիկայով: Նա զգալի աշխատանք է կատարել մայրենի լեզվով ձեռնարկների և երկրաբանական դասընթացների առանձին բաժինների կոնսպեկտների ստեղծման ուղղությամբ: Լեզուների իմացությունը նրան հնարավորություն է տվել զբաղվելու թարգմանչական և տերմինաբանական աշխատանքով: Նա կազմել է ընդհանուր երկրաբանության դասընթացը, երկրաբանական տերմինների հայերեն բառա-

ռանը, թարգմանել Հ.Տիրելի «Ապարաբանության հիմունքներ» գիրքը և այլն, որոնք, ավաղ, մնացին անավարտ և չհասան մեզ:

Մանկավարժական, գիտական և հասարակական ակնառու ծառայությունների համար 1935թ. Հայաստանի Կենտգործկոմը նրան պարգևատրում է պատվոգրով: Տ.Զրբաշյանը 1930 և 1933 թվականներին ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի անդամ:

Կարճ կյանք ունեցավ Տիգրան Զրբաշյանը: Նա անհատի պաշտամունքի շրջանի զոհերից է, մահացավ 1937թ., Երևանում:

Նվազ արգասավոր և բեղմնավոր չի եղել պրոֆեսոր Տիգրան Զրբաշյանի նաև գիտահետազոտական և արտադրական գործունեությունը: Մանկավարժական աշխատանքին զուգընթաց շուրջ մեկ տասնամյակ նա ուսումնասիրել է մեր հանրապետության մի քանի շրջանների երկրաբանական կառուցվածքը, հետախուզել ոչ մետաղային օգտակար հանածոները:

Սա այն հազվագյուտ դեպքերից է, երբ գիտամանկավարժական և գիտահետազոտական բնագավառները հավասար ուժով համատեղվել են մեկ մարդու մեջ:

1927-1937 թվականների ընթացքում Տիգրան Զրբաշյանը աշխատել է նաև Հայաստանի ժողտնտխորհրդի հանքագործական բաժնում, իսկ այնուհետև՝ ժողկոմխորհի կիրառական երկրաբանության և հանքաբանության գիտահետազոտական ինստիտուտում, ապա ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի երկրաբանության ինստիտուտում որպես հանքաբան ինժեներ, խորհրդատու, որոնողահետախուզական արշավախմբերի ու ջոկատների պետ և գիտական աշխատակից:

Այդ տարիներին նա հետազոտական աշխատանքներ է ծավալում Մերձերևանյան, Կոտայքի, Հրազդանի (նախկին Ախտայի) շրջաններում, հանքային հումքի նոր աղբյուրների ու պաշարների որոնման, հետախուզման և օգտագործման ուղղությամբ:

Տ.Զրբաշյանը արտակարգ հետաքրքրություն է հանդես բերել Հայաստանի ոչ մետաղական օգտակար հանածոների և հատկապես հրաբխածին քարատեսակների (բազալտ, տուֆ, պեմզա, օբսիդիան, պեռլիտ և այլն) նկատմամբ: Դա պայմանավորված է հենց Հայաստանի երկրաբանական կառուցվածքով (որպես դասական հրաբխականության մարզ) և մեծ տարածում ունեցող ապարներով: Բացի այդ, նա իր ուսումնառության և վաղ գործունեության տարիներին աշխատելով Թիֆլիսի ու Փարիզի ուսումնական հաստատությունների հանքաբանական կաբինետներում, դարձել էր երդվյալ քարասեր, կարդացել էր Հայաստանի երկրաբանությանը նվիրված դասական ամբողջ գրականությունը:

Նա առաջիններից մեկն էր, որ մեր հանրապետությունում ծավալեց երկրաբանական հետախուզական և հետազոտական աշխատանքներ: Այդ աշխատանքների արդյունքներն ամփոփված են նրա բազմաթիվ երկրաբանական, գիտատեխնիկական հաշվետվություններում և զեկուցագրերում (պահվում են Հայկական երկրաբանական վարչության ֆոնդերում): Դրանցից հիշատակության արժանի են Կոտայքի և Ախտայի (Հրազդան) շրջանների պեմզաների ու դիատոմիտների մի շարք հանքավայրերի (Էլար, Նովոնիկոլաևկա (Զրաբեր), Սուխոյ-Ֆոնտան (Ֆոնտան), Նուռնուս և այլն) հայտնաբերմանը ու հետախուզմանը (1927-1929), Ախամզալու (Մարմարաշեն) - Աղբաշի (Արևշատ) օնիքսի, Քեթանլուի (Երասխաջրի) ծծմբի, Կոբղի և Ախթալայի բարիտի (1927), Զարխեջի (Կույբիշև) կոնգլոմերատի և կիսաթանկարժեք քարերի (1932), Զրվեժի գիպսի (1933) և Թալինի շրջանի օբսիդիանի ու պեռլիտի (1929-1932) հանքավայրերին նվիրված հաշվետվությունները: Դրանցում, այլևայլ հարցերի հետ միասին, նա հանրապետության ժողովրդական տնտեսության մի շարք բնագավառների զարգացման գործում վճռորոշ տեղ էր հատկացնում Հայաստանի քարերին: Հովհաննես Կարապետյանի հետ նա զգալի աշխատանքներ ձեռնարկեց և իրականացրեց բնական շինանյութերի բազում հանքավայրերի որոնման և հետախուզման, նոր պաշարների ու հանքավայրերի հայտնաբերման և դրանք շահագործման հանձնելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության շինարարության վերելքը նրանք կապում էին «քարաշատ երկրի» ընդերքի ոչ մետաղական հարստությունների և դրանց հեռանկարների հետ, բացառիկ տեղ էին տալիս բարձրորակ պեմզաների, տուֆերի և բազալտների, մաքուր դիատոմիտների, դեկորատիվ օնիքսների, մարմարների, կոնգլոմերատների ու կիսաթանկարժեք քարերի լայնածավալ հետազոտման և օգտագործման հարցերին:

Հայաստանի երկրաբանության երախտավորների կանխատեսումներն իրականացան տարիներ հետո: «Քարաստան երկրի քարերը դարավոր քնից զարթոնք ապրեցին, Հայաստանի քարերն սկսեցին խոսել», - շուրջ հիսուն տարի առաջ Հ.Կարապետյանի կողմից ասված այս պատկերավոր խոսքն այժմ սովորական ու բնական է հնչում: Իսկ անցած տարիներին մեր հանրապետության բազմերանգ քարատեսակների հարուստ պաշարների հիմքի վրա ստեղծվեցին ու աճեցին Արթիկ-տուֆի, Անիպեմզայի, Նուռնուսի դիատոմիտների, Արարատի կրաքարերի, Մերձերևանյան շրջանի, Արագած լեռնազանգվածի, Շիրակի դաշտի տուֆերի և բազալտների, Հայմարմար տրեստի, Երևանի աղի, Իջևանի բենտոնիտային կավերի, քարերի մշակման Խարբերդի, Արզնու և Լուսակերտի ձեռնարկությունները:

Հետագայում, Հայկական երկրաբանական վարչության որոնողահետախուզական աշխատանքների պլանում զգալի տեղ գրավեցին ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրության հարցերը, իսկ հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի կազմում ստեղծվեց ոչ մետաղական օգտակար հանածոների բաժին:

Ներկայումս Հայաստանի քարերի պրոպագանդման հարցում շնորհակալ գործ է կատարում քարասերների հայկական ակումբը:

Մեր հանրապետության շինանյութերի և ընդհանրապես ոչ մետաղային հումքի հետազոտման արդյունքները շարադրված են «Հայկական ԽՍՀ երկրաբանություն» աշխատության 7-րդ հատորում:

Տիգրան Զրբաշյանը հույժ կարևորություն էր տալիս Հայաստանի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների սիստեմատիկ ուսումնասիրությանը, և ինքն էլ գիտահետազոտական աշխատանք ծավալողների մեջ առաջիններից մեկն էր: Հարկ է ասել, որ 20-ական թվականների վերջերին և 30-ական թվականների սկզբներին մեր հանրապետությունում մի քանի հայ երկրաբանների (Հ.Կարապետյան, Պ.Ղամբարյան) կողքին գիտահետազոտական աշխատանքներ էին ծավալել ռուս անվանի երկրաբանները՝ Ֆ.Յու.Լևինսոն-Լեսինգը, Կ.Ն.Պաֆենհոլցը, Պ.Ի.Լեբեդևը, Ս.Ս.Կուզնեցովը, Ա.Ա.Տուրցևը, Ա.Ս.Գինզբերգը, Մ.Պ.Կազակովը, Բ.Մ.Կուպլետսկին, Վ.Ն.Կոտլյարը, Վ.Գ.Գրուշևոյը և այլոք: Նրանք ուսումնասիրում էին Սևանի ավազանի, Արագած լեռնազանգվածի, և հանքային շրջանների երկրաբանական-ապարագրական, ջրաերկրաբանական հարցերը, կատարում էին երկրաբանական հանույթ:

Այս անունների շարքում իր ուրույն տեղն ունի Տիգրան Զրբաշյանը: Նա իր գիտական հետազոտությունների համար ընտրում է շերտագրությունն ու հնէաբանությունը՝ մեր հանրապետության խիստ ուշագրավ ու դեռևս չուսումնասիրված բնագավառները: Դա պայմանավորված էր ոչ միայն անվանի երկրաբանի նախասիրությամբ, այլև Հայաստանում երրորդական հասակի շերտախմբերի մեծ տարածմամբ, նստվածքային ապարների բազմազանությամբ, բրածո մնացորդների հարուստ պարունակությամբ և այլն:

Տ.Զրբաշյանը Մերձերևանյան շրջանի առաջին հետազոտողներից էր, որ 1931-1935 թվականների ընթացքում ուսումնասիրել է Զրվեժ-Շորջրիձոր-Շորաղբյուր տեղամասի երկրաբանական կառուցվածքը և օգտակար հանածոները: Նա հատուկ ուշադրություն է դարձրել այդ տեղամասի երրորդական հասակի նստվածքների շերտագրության, նստվածքագոյացման և

հնէաբանության հարցերին, այն համարել Խորհրդային Միության դասական շրջաններից մեկը:

Տ.Զրբաշյանը տվեց Մերձերևանյան շրջանի երրորդական հասակի շերտախմբերի ստորաբաժանումը, առանձնացրեց միոցենի սարմատյան հարկը: Նա լուրջ ուշադրություն դարձրեց հնէաբանական մեթոդի վրա, հասակային բաժանումների և հնէաաշխարհագրական պայմանների վերականգման համար օգտագործեց Շորաղբյուրի անտիկլինալի նստվածքներում առկա շատ հարուստ ծովային բրածո ֆաունան (նումուլիտներ, կորալներ, փափկամորթեր, ծովոզնիներ և այլն):

Մերձերևանյան շրջանը, ըստ Տ.Զրբաշյանի, այն բանալին է, որը կարող է բացել մեր հանրապետության երրորդական շերտախմբերում «թաքնված գաղտնիքները», լուծել դեռևս չպարզաբանված և վիճելի մի շարք հարցեր: Նա առաջիններից էր, որ դրեց Մերձերևանյան շրջանի հնարավոր նավթաբերության և աղաբերության պրոբլեմը, շրջանում հետևողական և մեծ մասշտաբի երկրաբանական որոնողահետախուզական աշխատանքներ կազմակերպելու խնդիրը:

1935-1937 թվականների ընթացքում Տիգրան Զրբաշյանը իր գիտահետազոտական աշխատանքները շարունակում է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի (ԱրմՖԱՆ) երկրաբանական ինստիտուտում, որպես գիտական աշխատող և Կոտայքի երկրաբանական արշավախմբի պետ: Այդ տարիներին, ընդարձակելով իր ուսումնասիրությունների ոլորտը Մերձերևանյան շրջանում, նա ընգրկում է նաև Հրազդան և Ազատ գետերի ավազանները: Դաշտային հետազոտությունների և փաստական հարուստ նյութերի մշակման հիման վրա նա տալիս է Հրազդանի կիրճի (Քանաքեռ-Արզնի տեղամաս) վերին երրորդական նստվածքների շերտագրության և հնէաբանության բնութագիրը, հաստատում սարմատյան հարկի առկայությունը, առանձնացնում է մակտրային կրաքարերի և ծկնային կավային թերթաքարերի զոնաներ:

Բազմավաստակ երկրաբանը զգալի գործ է կատարել նաև ինժեներական երկրաբանության բնագավառում: Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի և մասնավորապես պետական գործիչներ Սահակ Տեր-Գաբրիելյանի և Արամայիս Երզնկյանի հանձնարարությամբ նա գործնական օգնություն է ցույց տալիս հանրապետության նախագծային և շինարարական կազմակերպություններին՝ տնտեսական կարևոր նշանակություն ունեցող առաջնահերթ խնդիրների լուծման գործում: Լինելով այդ բնագավառի կառավարական հանձնաժողովի անդամ, նա գրել է երկրաբանական և ջրաերկրաբանական

մի շարք եզրակացություններ ու զեկուցագրեր՝ նվիրված հարավ-արևելյան ջրանցքների ուղեգծի երկրաբանական պայմանների բնութագրմանը (1931-1934), Գորիսի երկրաշարժի հետևանքների (1931) և Գորիսի, Սիսիանի, Մերձերևանյան շրջանների սողանքների բնույթի և նոր բնակավայրերի կառուցման հարցերին (1931-1935):

Կյանքի վերջին տարիներին (1936-1937) Տ.Զրբաշյանը աշխատում էր «Հրազդան և Ազատ գետերի ավազանների երրորդականի նստվածքների շերտագրությունը և ֆաունան» թեմայի վրա, որը պետք է հանդիսանար նրա կատարած հետազոտությունների ամփոփումը, սակայն, ցավոք, մնաց անավարտ:

Գիտահետազոտական և դաշտային աշխատանքների ընթացքում նա հենվում էր իր փորձի, տեսական ու գործնական գիտելիքների վրա: Նա գերազանց տիրապետում էր ֆրանսիական և ռուսական երկրաբանական դրպոցների առաջավոր մեթոդներին, առաջնակարգ տեղ էր տալիս փաստերին և հաշվի էր առնում երկրաբանական պրոցեսների և երևույթների զարգացման օրինաչափությունները: Երկրաբանական ճշգրիտ հանույթ, լրիվ կտրվածքների կազմում ու համադրում, հանքային փորվածքների ու հորատանցքների անսխալ տեղադրում՝ սրանք են ահա, նրա համոզմամբ, դաշտային աշխատանքների հաջողության գրավականը: Նրա տաղանդի առանձնահատկություններից մեկն էլ աշխատասիրությունն է, որով և օժտված էր լիուլի, նաև՝ բարությունն ու հոգատարությունը բոլորի և հատկապես իր գործընկերների նկատմամբ: Եվ զարմանալի չէ, որ սիրված ու հարգված էր ամենքից: Նրան գիտեին Հայաստանի ամեն մի անկյունում, ուր նա եղել էր, և բոլորի համար էլ ցանկալի հյուր էր:

Տ.Զրբաշյանը երկրաբանությունը և աշխարհագրությունը, այդ հարակից բնագավառները, համարում էր «երկվորյակներ կամ քույր և եղբայր»: Եվ աշխարհագրության բաժնի ստեղծումը նա կապում էր Հայաստանում այդ գիտության զարգացման հեռանկարների, ազգային մանկավարժական կադրերի և ընդհանրապես ժողովրդական տնտեսության մի շարք բնագավառներում համապատասխան մասնագետների պատրաստման հետ:

Նորաբաց ֆակուլտետի աշխարհագրության բաժնի առաջին կուրս է ընդունվում հիսուն հոգի: Միաժամանակ բաժինը լրացվում է համալսարանի պատմատնտեսագիտական ֆակուլտետի աշխարհագրական թեքում ունեցող երկրորդ կուրսի երեսունհինգ ուսանողներով և ապա՝ երկրաբանական բաժնից փոխադրված 10 ուսանողուհիներով:

Աշխարհագրության բաժնի ուսումնաարտադրական պրոցեսը բարձր մակարդակով կազմակերպելու համար Տ.Զրբաշյանը ֆակուլտետի հիմնա-

դիր դասախոսներ, պրոֆեսորներ Հայրապետ Հովհաննիսյանի (1878-1938), Ստեփան Լիսիցյանի (1865-1947), Գուրգեն Քոչարյանի (1893-1972) և Տիգրան Աթարբեկյանի (1888-1959) հետ համագործակցելով կազմակերպում է ֆիզիկական աշխարհագրության և տնտեսական աշխարհագրության ամբիոններ ու դրանց համապատասխան կաբինետներ, քարտեզագրական կաբինետ, ստեղծում ուսումնաարտադրական ծրագրեր ու պլաններ, մայրենի լեզվով դասագրքեր և այլն: Այդ հարցերի իրականացման գործում զգալի աշխատանք են կատարում նաև ֆակուլտետի դասախոսներ Ա.Օհանյանը, Պ.Հովհաննիսյանը, Ս.Բերբերյանը, Ա.Ներսիսյանը, Մ.Խաչատրյանը, Ա.Ղանալանյանը, Ն.Ահարոնյանը և Ա.Նալբանդյանը:

Աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետի աշխարհագրության բաժինը առաջին շրջանավարտները տվեց 1937 թվականին: Նրանց մեծ մասն անցավ մանկավարժական աշխատանքի, իսկ առաջավորներից մի քանիսը ընդունվեցին ասպիրանտուրա: Դրանով հիմք դրվեց մեր հանրապետությունում աշխարհագրական գիտությունների հետագա զարգացման և միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխարհագրության դասավանդման բարելավման գործին:

Տիգրան Զրբաշյանը Հայկական աշխարհագրական ընկերության հիմնադիրներից և ակտիվ անդամներից էր: Նա պրոֆեսորներ Հ.Հայրապետյանի, Ս.Լիսիցյանի, Գ.Քոչարյանի, Հ.Կարապետյանի, Ա.Պաֆենհոլցի և ընկերության գիտնական քարտուղար Հովհաննես Ստեփանյանի հետ ակտիվ գործունեություն ծավալեց ծրագրային միջոցառումների կազմակերպման, երկրի մասին գիտությունների տարածման և տարբեր բնույթի ու մասշտաբի աշխարհագրական քարտեզների ստեղծման բնագավառներում:

Աշխատելով Հայաստանի բուսականությունից զուրկ չորային շրջաններում, նա մեծ օգնություն է ցույց տվել տեղական իշխանություններին և գյուղի աշխատավորներին՝ բնակավայրերը խմելու և ոռոգման ջրով ապահովելու գործում:

Տ.Զրբաշյանի աշխատությունները (որոնց թիվն անցնում է երկու տասնյակից), չնայած գրվել են ավելի քան կես դար առաջ, սակայն այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունը: Ավելին, նրանցից շատերը իրենց առաջադրած տեսական ու գործնական եզրակացություններով լիովին համապատասխանում են Հայաստանի երկրաբանության առանձին հարցերի ժամանակակից պատկերացումներին և խնդիրներին:

Նրա գիտական հաշվետվությունները, որոնք կարելի է անվանել անտիպ մենագրություններ, ուղեկցվում են քարտեզագրական և գծագրական հարուստ նյութերով և լուսանկարներով:

Թեև իր կենդանության օրոք Տ.Զրբաշյանը չի թողել և ոչ մի տպագիր աշխատություն[1], սակայն նրա թողած ձեռագիր ժառանգությունը մասնագիտական լուրջ արժեք է ներկայացնում: Մահից ավելի քան երեք տասնամյակ անց, պրոֆեսորի որդին՝ երկրաբանական-հանքաբանական գիտությունների թեկնածու, երկրաբանական ինստիտուտի ավագ գիտաշխատող Ռուբեն Զրբաշյանը (այժմ արդեն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն) հրատարակեց հոր աշխատություններից մեկը՝ «Մերձերևանյան շրջանի երրորդականի նստվածքների շերտագրական ստորաբաժանումը և մի քանի տվյալներ նրանց նավթաբերության մասին» վերտառությամբ («Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր. Գիտություններ Երկրի մասին, 1969, հատոր 22, N4»):

Հենվելով անձնական հետազոտությունների և մասնագիտական դասական գրականության տվյալների վրա (Օսվալդ, Բոննե, Ռիննե, Բերտրանդ, Էմմոնս և ուրիշներ), հեղինակը քննարկում է Մերձերևանյան շրջանի և նրա հարակից տարածքի երկրաբանության մի քանի կարևոր հարցեր՝ կապված շերտագրության, հնարավոր նավթաբերության ու աղաբերության պրոբլեմների հետ: Տրվում են շրջանի երրորդական նստվածքների կտրվածքը, առանձին շերտախմբերի հասակային ստորաբաժանումները (էոցեն, վերին օլիգոցեն, ստորին-միջին միոցեն, վերին միոցեն (սարմատ), ստորին-միջին պլիոցեն), նրանց քարաբանական (ավազաքարեր, կավային թերթաքարեր, գիպսատար մերգելներ, այրվող թերթաքարեր, օոլիտային կրաքարեր, խեցային կրաքարեր, կոնգլոմերատներ և այլն) և հնէաբանական (նումուլիտներ, կորալային կրաքարեր, փափկամորթներ, ձկների դրոշմներ, մակտրաներ և այլն) բնութագիրը: Շրջանի հնարավոր նավթաբերության (նաև աղաբերության) պրոբլեմը նա հիմնավորել է երկրաբանական, տեկտոնական, քարաբանական, հնէաբանական, հնէաաշխարհագրական և նավթաբեր հայտնի շրջանների կտրվածքների հետ համադրման անվիճելի փաստերով:

Պետք է ասել, որ Տ.Զրբաշյանը հիմք դրեց հանրապետության երրորդական նստվածքների (նաև պարունակող ֆաունայի ու ֆլորայի) և ոչ մետաղական օգտակար հանածոների ուսումնասիրության բնագավառին, առաջ քաշեց Զրվեժ-Շորաղբյուր-Ողջաբերդ-Շորջրիձոր-Մանգյուս ու Քանաքեռ-Գետամեջ-Արզնի-Նուռնուս տեղամասերի հրաբխածին շերտախմբերի և լավաների մանրամասն հետազոտման ու քարտեզահանման հարցե-

1 Այն ժամանակ այդ դժվար էր մասնագիտական պարբերական մամուլի բացակայության պատճառով:

ը, գիպսի և այրվող թերթաքարերի հանքավայրերի հետախուզման անհրաժեշտությունը:

Պրոֆեսոր Տիգրան Զրբաշյանի վերջին տարիների գիտամանկավարժական և գիտահետազոտական գործունեությունը եղել է շատ արգասավոր: Իր պրպտուն մտքով և անհանգիստ բնավորությամբ նա շարունակ ձգտում էր կատարելագործման, նորի ու լավի հաստատման:

Մոսկվայի ու Լենինգրադի ԲՈՒՀ-երի գիտամանկավարժական փորձը յուրացնելու, ինչպես նաև անվանի գիտնական-մանկավարժների հետ անմիջական կապեր ստեղծելու նպատակով նա 1933-1934 թվականների ընթացքում երկու անգամ գործուղվել է այդ քաղաքները: Եղել է Մոսկվայի համալսարանի երկրաբանական ֆակուլտետում և Կիրառական հանքաբանության ինստիտուտում, Լենինգրադի Կենտրոնական գիտահետազոտական երկրաբանական-հետախուզական և Հանքագործական ինստիտուտներում: Այստեղ նա մոտիկից ծանոթացել է երկրաբանական այդ խոշոր կենտրոնների գիտական ու մանկավարժական աշխատանքի խիստ ուսանելի դրվածքին և նրանց անվանի գործիչների հետ (Լևինսոն-Լեսինգ, Զավարիցկի, Բորիսյակ, Ֆերսման, Բոլդիրև, Մազարովիչ, Նալիվկին, Յակովլև, Դավիթաշվիլի, Միլանովսկի, Կրիշտոֆովիչ, Պոլիբին, Լոդոչնիկով, Վարդանյանց, Պաֆենհոլց և ուրիշներ):

Մի քանի ամիս տևող գործուղումների ընթացքում Տ.Զրբաշյանը մասնակցել է ականավոր երկրաբան-մասնագետների դասախոսություններին և գործնական պարապմունքներին (ընդհանուր երկրաբանություն, բյուրեղագիտություն, հանքաբանություն, ապարագրություն, պատմական երկրաբանություն և այլն), ծանոթացել կաբինետների ու հավաքածուների, ուսումնական պլանների ու ծրագրերի, դասագրքերի ու ձեռնարկների հետ: Ծանոթացել է նաև գիտահետազոտական աշխատանքներին, զրուցել ու խորհրդակցել մասնագետների հետ:

Հաշվի առնելով ռուսական երկրաբանական դպրոցի փորձը, կարճ ժամանակում նա կազմում է դինամիկ (ընդհանուր) երկրաբանության, բյուրեղագիտության, հանքաբանության, բյուրեղաօպտիկայի, ապարագրության և երկրաբանության հետազոտման մեթոդների օրինակելի ծրագրեր:

Այնուհետև մասնագիտական գրականության ու ձեռնարկների խիստ պակասը և մայրենի լեզվով դասագրքերի բացակայությունը հարկադրում են երկրաբան-մանկավարժին լուրջ աշխատանք տանել նաև այդ ուղղությամբ: Առաջին հերթին նա ձեռնամուխ է լինում «Ընդհանուր երկրաբանություն» դասագրքի կազմման գործին, գրում է մի շարք բաժիններ և գլուխներ, որոնք նվիրված են հողմահարման պրոցեսներին, նստվածքային

ապարներին, մետամորֆիզմին և երկրաբանական տարեգրությանը: Բացի այդ, մայրենի լեզվով կազմում է ընդհանուր և պատմական երկրաբանության ու հնէաբանության դասընթացների առանձին բաժինների կոնսպեկտներ (երկրաբանական դարաշրջաններ, բրածո ֆաունայի դասեր և այլն), բազմացնում և հանձնարարում է ուսանողներին:

Տ.Զրբաշյանի նախաձեռնությամբ ռուսերենից թարգմանվում է Մալինկոյի և Պոտյոմկինի «Երկրաբանություն և հանքաբանություն» դասագիրքը (այս առարկան անցնում էին միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանում), որի խմբագրումը Հայպետհրատը հանձնարարում է նրան:

Անվանի մանկավարժը ստեղծագործական մեծ ծրագրեր էր կազմել իր հետագա գործունեության համար, սակայն, դժբախտաբար, նրանց մեծ մասը մնաց անկատար: Նրա թողած գրավոր ժառանգությունից պահպանվել են առանձին պատառիկներ, որոնցից հայտնի է դառնում, որ նա թարգմանել է նաև Ստրասբուրգի համալսարանի պրոֆեսոր Մորիս Ժինյուի «Շերտագրական երկրաբանություն» աշխատությունը և գրել է «Հնէաբանների ամերիկյան դպրոցը» (Լեյդին, Մարշ, Քոպ, Օսբորն) գիրքը, զգալի գործ է կատարել մայրենի լեզվով երկրաբանական տերմինների և բառարանի կազմման ուղղությամբ:

Խորհրդային Միության մի շարք շրջանների երկրաբանական կառուցվածքի և ընդերքի հարստությունների հետ ծանոթանալու գործում Տիգրան Զրբաշյանի համար կարևոր նշանակություն ունեցավ նրա մասնակցությունը համամիութենական խորհրդակցությունների ու համագումարների աշխատանքներին:

1926թ. դեկտեմբերին Լենինգրադում հրավիրվում է Միության հանքաբանների խորհրդակցություն, որին Հայաստանից մասնակցում է Տիգրան Զրբաշյանը: Խորհրդակցությունը քննության է առնում երկրի հանքային ռեսուրսների հայտնաբերման, հետախուզման, տարածման, պաշարների և օգտագործման տեսական ու գործնական մի շարք հարցեր, որոնք բացառիկ նշանակություն ունեին ժողովրդական տնտեսության և առաջին հերթին հանքարդյունաբերության վերականգման ու զարգացման գործում:

Տիգրան Զրբաշյանը ակտիվորեն մասնակցում է խորհրդակցության աշխատանքներին, կազմակերպված էքսկուրսիաներին, այցելում երկրաբանական-հանքաբանական թանգարանները և ուսումնական կաբինետները: Տեղում բանակցություններ է վարում Երևանի համալսարանի հանքաբանական կաբինետը նոր հավաքածուներով և ցուցադրական նյութերով լրացնելու համար: Այստեղ նա ծանոթանում է ակադեմիկոսներ Վ.Ի.Վերնադսկու և Ա.Ե.Ֆերսմանի հետ, որոնք զգալի հետաքրքրություն են հանդես

բերում Հայաստանի հանքային հումքի և նրա մշակման հեռանկարների նկատմամբ: Լենինգրադում գտնվելու օրերին Տ.Զրբաշյանը այցելում է իր նախկին աշակերտ, կուսակցական և պետական անվանի գործիչ Աղասի Խանջյանին, որի հետ չէր հանդիպել երկար տարիներ: Աղասի Խանջյանը ողջունում է իր ուսուցչի վերադարձը հայրենիք, բարձր գնահատում նրա մանկավարժական և գիտահետազոտական աշխատանքը և մեծ հույսեր կապում նրա ապագա գործունեության հետ:

Երրորդ համամիութենական երկրաբանական համագումարի աշխատանքներին մասնակցելու համար 1928թ. մայիսին Տաշքենդ է մեկնում Հայաստանի պատվիրակ Տիգրան Զրբաշյանը: Համագումարում, որը տևելու էր շուրջ մեկ ամիս, բացի լիագումար և սեկցիոն նիստերից, մեծ տեղ էր

1928թ. սեպտեմբերի 30-ին Տաշկենտում կայացած 3-րդ համամյութենական երկրաբանական համագումարի մի խումբ մասնակիցներ, «Չիչերին» ջերմանավի վրա, Կրասնավոդսկում, «Չելեքենդ» կղզի ուղևորվելիս:
Երկրորդ շարքում աջից-ձախ առաջինը Տ. Զրբաշյան, Երրորդը Հ. Կարապետյան

հատկացվել էքսկուրսիաներին: Երթուղիներն ընդգրկում էին Միջին Ասիայի երկրաբանական տեսակետից առավել հետաքրքիր շրջանները և տևելու էին երեք շաբաթ (համագումարի բացումից առաջ՝ մայիսի 7-20–ը և համագումարի փակումից հետո՝ 27–ից հունիսի 5-ը):

Այստեղ Տ.Զրբաշյանը մոտիկից ծանոթանում է ակադեմիկոս Վ.Օբրուչևի հետ: Նրանք միասին հասնում են մինչև Կասպից ծով: Այնուհետև լինում են Չելեքեն կղզում: Տ.Զրբաշյանը մեծ քանակությամբ բացառիկ հետաքրքիր նմուշներ է հավաքում, որոնցով հետագայում լրացնում է համալսարանի ընդհանուր երկրաբանության կաբինետի ֆոնդերը:

Տիգրան Զրբաշյանը գիտական սերտ կապեր է ունեցել այլազգի ականավոր գիտնական-մանկավարժների հետ: Նրա առաջին գնահատողները և մտերիմ բարեկամներն են եղել ճանաչված երկրաբաններ Հովհաննես Կարապետյանը, Պետրոս Ղամբարյանը, Վրաստանի խորհրդային երկրաբանական դպրոցի հիմնադիր, ակադեմիկոս Ալեքսանդր Զանելիձեն, ֆրանսիացի երկրաբան-մանկավարժ, պրոֆեսոր Պիեռ Բոննեն, ռուս երկրաբան Վլադիմիր Բոգաչևը և ուրիշներ:

Անդրկովկասի երկրաբանական ծառայության ականավոր ներկայացուցիչ, Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի և երկրաբանական թանգարանի հիմնադիր, պրոֆեսոր Հովհաննես Կարապետյանը (1875-1943) Տիգրան Զրբաշյանի հետ ծանոթացել էր դեռևս 1918թ. Թիֆլիսում: Այդ ժամանակ Տ.Զրբաշյանը պաշտոնավարում էր որպես ուսուցիչ և միաժամանակ սովորում Թիֆլիսի համալսարանում, աշխատում պոլիտեխնիկական ինստիտուտի հանքաբանական կաբինետում: Հաշվի առնելով նրա ընդունակությունները և հարուստ գիտելիքները, Կարապետյանը երիտասարդ Տիգրանին խորհուրդ է տալիս դառնալ երկրաբան: Տարիներ անց, երբ Հովհաննես Կարապետյանը ղեկավարում էր Հայաստանի պղնձի հանքավայրերի (Ալավերդի, Ղափան) վերականգնման և հետախուզական աշխատանքները, Երևանում հանդիպում է Երևանի համալսարանի դասախոս Տ.Զրբաշյանին և առաջարկում նրան համատեղությամբ աշխատել իր հետ: Վերջինս տալիս է իր համաձայնությունը և 1926թ. մայիսից մինչև հոկտեմբեր աշխատում է Ալավերդում որպես ինժեներ-երկրաբան և զբաղվում է գործող ,ու փակված հանքավայրերի ուսումնասիրությամբ և որոնողա-հետախուզական աշխատանքների կազմակերպմամբ:

Ալավերդում կատարած կարճատև, բայց արդյունավետ աշխատանքը արժանանում է բարձր գնահատականի: Այստեղից էլ սկսվում է նրա արտադրական-հետազոտական գործունեությունը, որ նա ծավալում է հետա-

գայում Հայաստանի մի շարք շրջաններում՝ ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի որոնման, հայտնաբերման և հետախուզման բնագավառներում:

Հովհաննես Կարապետյանը արտակարգ հարգանք է տածել Տիգրան Զրբաշյանի նկատմամբ, նրան դասելով լավագույն երկրաբան-մանկավարժների շարքը: Այդ էր պատճառը, որ 1935թ. Երևանում հիմնելով երկրաբանական գիտահետազոտական ինստիտուտ, Զրբաշյանին հրավիրում է իր մոտ աշխատանքի: Այստեղ Տ.Զրբաշյանը որպես գիտական աշխատող և արշավախմբի պետ զգալի գործ է կատարում Հայաստանում շերտագրական ու հնէաբանական հետազոտությունների և երկրաբանական թանգարան ստեղծելու ուղղությամբ: Իր հերթին Հ.Կարապետյանն էլ ամենօրյա օգնություն է ցույց տալիս Տ.Զրբաշյանին՝ Երևանի պետական համալսարանի աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետի ուսումնաարտադրական պրոցեսի կազմակերպման հարցերում:

Տիգրան Զրբաշյանը բարեկամական ջերմ կապերի մեջ է եղել անվանի երկրաբան Պետրոս Ղամբարյանի (1899-1934) հետ: Նրանք ծանոթացել են 1917թ. Թիֆլիսում, իսկ այնուհետև մտերմացել 20-ական թվականների սկզբներին Փարիզում[2]: Նրանց բարեկամությունը շարունակվում է Երևանում, երբ պետական համալսարանում համատեղ աշխատանքի տարիներին Պ.Ղամբարյանն աշխատում էր որպես քիմիական (որակական անալիզ) լաբորատորիայի վարիչ և երկրաբանական առարկաների դասախոս: Տ.Զրբաշյանի հետ մեծ աշխատանք է տարել քիմիական ֆակուլտետում երկրաբանական թեքումով ազգային մասնագիտական կադրեր պատրաստելու ուղղությամբ: Միասին հաճախ մասնակցել են դաշտային աշխատանքների, մի շարք հանձնաժողովների աշխատանքներին, գրել են մի քանի խոշոր կառույցների երկրաբանական պայմաններին նվիրված եզրակացություններ:

Պ.Ղամբարյանի անակնկալ մահը (զոհվել է 1934թ. փետրվարին, ինքնաթիռի աղետից) մեծ վիշտ պատճառեց Տ.Զրբաշյանին:

Տիգրան Զրբաշյան գիտնականին, մանկավարժին ու մարդուն բարձր է գնահատել Վրացական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ալեքսանդր Զանելիձեն, որը նրան գիտեր դեռևս Սորբոնի համալսարանում ուսանելու տարիներին: Ականավոր երկրաբան-գիտնականը միշտ հե-

---

2 Այդ ժամանակ Պ.Ղամբարյանը սովորում էր Սորբոնի համալսարանում և միաժամանակ աշխատում բնապատմական թանգարանում ականավոր պրոֆեսորներ Մոզենի և Լաքրուայի ղեկավարությամբ: Բարձրագույն կրթություն ստանալուց հետո երկրաբան Պ.Ղամբարյանը 1927թ. վերադառնում է Երևան:

տաքրքրվել է Տ.Զրբաշյանի մանկավարժական-հետազոտական աշխատանքով, ուրախացել նրա հաջողություններով: Վրաստանի երկրաբանության նահապետը մշտապես պաշտպանել է Հայաստանում գիտական և ուսումնական օջախներ ստեղծելու միտքը:

Տիգրան Զրբաշյանի հոգեհարազատ բարեկամներից է եղել ֆրանսիացի երկրաբան, պրոֆեսոր Պիեռ Բոննեն (1879-1965), որը զգալի դեր է խաղացել Հայաստանի երկրաբանական կառուցվածքի և երկրաբանական զարգացման պատմության հետազոտման, ազգային առաջին երկրաբան կադրերի պատրաստման գործում: Պիեռ Բոննեն երկար տարիներ աշխատել է Փարիզի համալսարանում՝ որպես պրոֆեսոր է.Օգի ասիստենտ: Մանկավարժական աշխատանքին զուգընթաց 1909-1914թթ. ուսումնասիրել է Արարատյան հարթավայրից մինչև Սևանա լճի տարածքի երկրաբանական կառուցվածքը: Կատարել է մանրամասն երկրաբանական հանույթ, հավաքել է շատ հարուստ փաստացի նյութեր, որոնց մշակմանը նվիրաբերել է իր ամբողջ կյանքն ու գործունեությունը: Այդ գործում զգալի դեր են խաղացել նրա հայազգի կինը՝ Նադեժդա Թամամշևան և վերջինիս քրոջ ամուսին Պետրոս Ղամբարյանը:

Պ.Բոննեն մեծ դեր է խաղացել Տիգրան Զրբաշյանի (նաև Պետրոս Ղամբարյանի) կյանքում: Անվանի երկրաբան-մանկավարժը նկատեց ու գնահատեց արտակարգ ընդունակ և գիտելիքներով օժտված հայ ուսանողներին և հայրական հոգատարություն հանդես բերեց նրանց նկատմամբ: Նա մեծ սիրով պարապում էր նրանց հետ, մասնակից դարձնում իր գիտահետազոտական աշխատանքներին:

Տիգրան Զրբաշյանին բարձր է գնահատել Խորհրդային Միության երկրաբանական ծառայության ականավոր ներկայացուցիչ Վլադիմիր Վլադիմիրովիչ Բոգաչևը (1881-1965), որն իր բազմակողմանի և բեղմնավոր գիտամանկավարժական ու հետազոտական գործունեության ընթացքում բարեկամական կապեր է ունեցել նաև հայ անվանի այլ երկրաբանների հետ (Ս.Այվազով, Հովհ.Կարապետյան և ուրիշներ): Պրոֆեսոր Վ.Բոգաչևը հետաքրքրվել է Հայաստանի երկրաբանության և հատկապես երրորդականի շերտագրության, հնէաբանության և լայն տարածում ունեցող նստվածքային ապարների հարցերով: Նա Տ.Զրբաշյանի և Պ.Ղամբարյանի հետ եղել է Մերձերևանյան շրջանում, կատարել մի շարք երթուղիներ (Շորաղբյուր-Շորջրիձոր-Ողջաբերդ-Գառնի-Նուռնուս-Արզնի-Քանաքեռ և այլն), հավաքել ու մշակել է բրածո ֆաունա, եղել է նրանց անփոխարինելի խորհրդատուն: Բոգաչևը արտակարգ հարգանք է տածել Տ.Զրբաշյանի նկատմամբ, միշտ ակնածանքով է խոսել նրա մասին, շատ հարցերում համամիտ է եղել նրա

առաջ քաշած երկրաբանական եզրակացություններին (սարմատ հարկի առկայություն, հնարավոր աղաբերություն, նավթաբերություն և այլն):

Ակադեմիկոս Վ.Կոմարովի և պրոֆեսոր Ն.Տրիցկու հանձնարարությամբ Տ.Զրբաշյանը կապեր է հաստատել անվանի հնէաբուսաբան պրոֆեսոր Իվան Պոլիբինի հետ: Տ.Զրբաշյանը ուղեկցել է նրան դաշտային աշխատանքների ընթացքում, ցույց տվել բրածո-բուսական մնացորդներով հարուստ վայրերը: Նրանք հավաքել են նմուշներ, որոնց հետագա մշակման հիման վրա Ի.Պոլիբինը հրապարակել է Հայաստանի երրորդական ֆլորային նվիրված աշխատություն:

Բազմավաստակ երկրաբան-մանկավարժը բարեկամական կապերի մեջ է եղել հայ մտավորականության ամենատարբեր բնագավառների ճանաչված ու սիրված գործիչների հետ: Այդպիսիներից են Դերենիկ Դեմիրճյանը (շատ էր հավանում նրա մի շարք պատմվածքները, լեզուն և փիլիսոփայական միտքը), Ստեփան Զորյանը և Ակսել Բակունցը (շատ էր սիրում Բակունցի «Ալպիական մանուշակը»), ժողովրդական նկարիչներ Ստեփան Աղաջանյանը (բարձր էր գնահատում նրա վրձնած հոր և մոր դիմանկարները) և իր հայրենակից Փանոս Թերլեմեզյանը, ականավոր պատմաբաններ Աշխարհբեկ Քալանթարը և Աշոտ Հովհաննիսյանը:

Տ.Զրբաշյանը մի առանձին համակրանքով էր կապված երաժշտության բնագավառի մեծ նվիրյալներ Ռոմանոս և Սպիրիդոն Մելիքյանների, բժշկապետներ Համբարձում Քեչեկի, Արտաշես Մելիք-Ադամյանի, Հ.Գաբրիելյանի, անվանի ֆիզիկոս մանկավարժ Ալեքսանդր Հակոբյանի և էլի շատ-շատերի հետ:

Ինչպես տեսանք, պրոֆեսոր Տիգրան Զրբաշյանի գիտամանկավարժական գործունեությունը հիմնականում անցել է Երևանի համալսարանում, շուրջ տասը տարի՝ 1926-ից մինչև 1937 թվականը: Այդ ժամանակամիջոցում նա հսկայական աշխատանք է կատարել համալսարանում, երկրաբանական առարկաների ծրագրային դասավանդման գործի բարելավման, աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետի ստեղծման և ուսումնաարտադրական հարցերի կազմակերպման ուղղությամբ:

Անվանի երկրաբան-մանկավարժի ջանքերով Երևանում ստեղծված երկրաբանության բարձրագույն ուսումնական օջախը իր կեսդարյա գոյության ընթացքում հասել է զգալի հաջողությունների և արժանացել լայն ճանաչման: 1945թ. երկրաբանական բաժինը անջատվում է աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետից և դառնում ինքնուրույն ֆակուլտետ:

Երևանի համալսարանի երկրաբանական ֆակուլտետը երկրին տվել է շուրջ 1700 ինժեներ-երկրաբան, ինժեներ-երկրաքիմիկոս և ինժեներ-ջրա-

երկրաբան: Շրջանավարտներից շատերը արժանացել են ՀՀ ԳԱ ակադեմիկոսի, թղթակից անդամի կոչման, գիտության դոկտորի գիտական աստիճանի, մոտ 200 հոգի՝ գիտության թեկնածուի գիտական աստիճանի, երեք տասնյակից ավելին՝ Հայկական Հանրապետության վաստակավոր երկրաբանի պատվավոր կոչման:

Ներկայումս ֆակուլտետն ունի ընդհանուր և կիրառական երկրաբանության, պատմական և ռեգիոնալ երկրաբանության, ապարագրության ու հանքաբանության, օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման մեթոդների ամբիոններ: Ամբիոններում աշխատում են 27 դասախոսներ (այդ թվում՝ 7 դոկտոր, պրոֆեսոր, 19 գիտության թեկնածու, դոցենտ և մեկ ավագ դասախոս): Ֆակուլտետում գործում են 14 կաբինետներ և 4 լաբորատորիաներ:

Անվանի երկրաբան-մանկավարժի մահից տարիներ անց միայն հնարավոր եղավ հրապարակորեն հիշատակել նրա անունը և ըստ արժանավույն գնահատել վաստակը:

Երկար տարիների լռությունը հայ երկրաբան երախտավորի նկատմամբ պայմանավորված էր "անհատի պաշտամունքի" ծանր շրջանով:

«Հայաստանի քարասերների ակումբի» պրոֆեսոր Տիգրան Ջրբաշյանի ծննդյան 90-ամյակին նվիրված երեկո: Ամբիոնի մոտ է ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Ասլանյանը:

1960 թվականից սկսած, հրապարակվում են մի շարք հոդվածներ՝ նվիրված պրոֆեսոր Տիգրան Զրբաշյանի կյանքին ու գործունեությանը, վեր է հանվում նրա դերը Հայաստանի երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրման, երկրաբանական ծառայության, ՀՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի կազմավորման գործում:

Կազմակերպվել են նաև Տիգրան Զրբաշյանի հիշատակին նվիրված հանդիսություններ:

Երևանի համալսարանի երկրաբանական ֆակուլտետի նախաձեռնությամբ 1966թ. մարտի 19-ին համալսարանի մեծ հանդիսասրահում կազմակերպվում է Տ.Զրբաշյանի հիշատակին նվիրված երեկո: Երեկոյի ժամանակ հրապարակվում է Հայկական ԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության որոշումը՝ Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի ընդհանուր երկրաբանության կաբինետը պրոֆեսոր Տիգրան Զրբաշյանի անունով կոչելու մասին:

Պրոֆեսոր Տիգրան Զրբաշյանի հիշատակին նվիրված երկրորդ միջոցառումը կազմակերպել է Հայաստանի քարասերների ակումբը, 1979 թվականի նոյեմբերի 30-ին, նրա ծննդյան 90-ամյակի կապակցությամբ:

Հայաստանի երկրաբանության մեծ երախտավորի հիշատակին նվիրված արտակարգ միջոցառում հանդիսացավ 1989թ. դեկտեմբերի 20-ին Երևանի համլսարանի, «Հայերկրաբան» միավորման, ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի և Հայկական երկրաբանական ընկերության կողմից կազմակերպած գիտական նստաշրջանը՝ նվիրված նրա ծննդյան 100-ամյակին:

Նստաշրջանի հանդիսավոր մասում «Պրոֆեսոր Տ.Զրբաշյանը Երևանի համալսարանի երկրաբանական-աշխարհագրական ֆակուլտետի հիմնադիր» թեմայով հանդես եկավ դոցենտ Պ.Բոշնաղյանը: Այնուհետև հուշերով հանդես եկան ակադեմիկոս Մ.Զրբաշյանը, պրոֆեսորներ Ս.Բալյանը և Ա.Կարապետյանը, դոցենտներ Թ.Թադևոսյանը և Լ.Ավագյանը, ավագ սերնդի երկրաբան Գ.Բաղդասարյանը:

Նստաշրջանում լսվեցին յոթ զեկուցումներ, որոնց զգալի մասը կապված էին հոբելյարի կատարած գիտահետազոտական աշխատանքների հետ: Գիտական նստշրջանը որոշեց հարց հարուցել Երևանի համալսարանի ռեկտորատի առջև՝ երկրաբանական ֆակուլտետում հիմնել պրոֆեսոր Տ.Զրբաշյանի անվան կրթաթոշակ: Անհրաժեշտ համարվեց հուշատախտակներ տեղադրել ինչպես ֆակուլտետում, այնպես էլ նրա ապրած շենքում (Երևան, Աբովյան N29):

Բազմավաստակ երկրաբան-մանկավարժի ծննդյան 100-ամյակի առթիվ պարբերական մամուլում հրապարակվեցին մի շարք հոդվածներ և հատուկ թողարկում տրվեց հայկական հեռուստատեսությամբ (Վ.Մանոյան):

«Մեծ վանեցու» ծննդյան հիշարժան տարեթիվը նշեց նաև «Վասպուրականի հայրենասիրաց միությունը» (նախաձեռնող՝ պրոֆեսոր Վ.Հարությունյան):

Տիգրան Զրբաշյանն իր մի քանի գործընկերների հետ (Հովհաննես Կարապետյան, Պետրոս Ղամբարյան և ուրիշներ) առաջինը «հերկեցին» մեր հանրապետության երկրաբանական «խոպանը», դարձան նրա առաջին «սերմնացանը», թողնելով գալիք սերունդներին «առատ բերքի հունձ»:

Թեև կարճ կյանք ունեցավ անվանի երկրաբան-մանկավարժը, սակայն նա ավելին արեց, քան հնարավոր էր, բայց արեց անհամեմատ քիչ, քան կաներ, եթե չկտրեին նրա կյանքի թելը... չարագուշակ 1937-ին:

Ասում են Ուսուցիչը չի ծերանում... Նրա կերպարը մնում է անփոփոխ ու անմար, և երբեմն ինձ թվում է, թե կգա իմ սիրելի Ուսուցիչը, կգա իր բարի ժպիտով ու պայծառ մտքով, ճերմակ խալաթը հագին, որ շարունակի ընդհատված դասը: Կգա ուսապարկը մեջքին, երկրաբանի մուրճը ձեռքին, որ շարունակի ընդհատված դաշտային աշխատանքը...

Ու քայլում է նա այսօր մեզ հետ, թանկագին Ուսուցիչը, քանզի Ուսուցիչը չի մահանում...

1935-1937 թվականների անհատի պաշտամունքի, բռնությունների և ողբերգությունների ժամանակաշրջանը խոր հետք թողեց երկրաբան-մանկավարժի հոգեկան աշխարհի վրա: Նրան մեծ վիշտ պատճառեցին Աղասի Խանջյանի սպանությունը (որի ուսուցիչն էր եղել Վանում, իսկ հետագա տարիներին ունեցել ընտանեկան մտերմություն), պետական ղեկավար աշխատողների և ականավոր մտավորականների ու գործիչների ձերբակալությունները: Պատգամավոր Զրբաշյանին արգելեցին մեկնել Մոսկվա, Միջազգային 17-րդ երկրաբանական կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու համար: Նա հասկացավ ստեղծված դաժան իրադրությունը, որոշեց արագ ավարտել գիտահետազոտական աշխատանքները, ավելի լավ նախապատրաստել 1937-1938 ուսումնական տարին և սպասել վաղվա ճակատագրական ժամին:

1937 թվականի օգոստոսի 30-ին, ավարտելով դաշտային աշխատանքները, Տ.Զրբաշյանը Գառնիից վերադարձավ Երևան, իսկ հետևյալ օրը ձերբակալվեց: Խուզարկությունից հետո տարան նրա հարուստ գրադարանի գրքերը, բոլոր ձեռագրերը, փաստաթղթերը, նամակներն ու լուսանկարները: Ընտանիքը՝ կինը և երկու մանկահասակ որդիները վտարվեցին բնակարանից (Աբովյան, 29): Ժողովրդի մեծ բարեկամը դարձավ «ժողովրդի թշնամի», «խանջյանական» և «ֆրանսիական լրտես»:

Տարիների վիշտը սրտում, պրոֆեսորի կինը, անվանի մտավորական և իսկական հայուհի, Երևանի բժշկական ինստիտուտի դոցենտ Էլպիս Տիգրանի Զրբաշյան-Կարասեֆերյանը (1908թ. Վան – 1986թ. Երևան) իրեն ամբողջությամբ նվիրաբերեց իր որդիների դաստիարակության ու կրթության գործին:

Արժանավոր հոր արժանավոր զավակներն իրենց նվիրեցին գիտությանը, ավագը՝ Էդգարը, տեխնիկական գիտությունների թեկնածու է, Զրային պրոբլեմների և հիդրոտեխնիկայի գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի գիտության գծով տեղակալը, իսկ Ռուբենը երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր է, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրենը և շարունակում է հոր «կիսատ թողած» գործը:

Հայաստանի երկրաբանության երախտավորի պայծառ անունը և անմոռաց հիշատակը պարտավորեցնում են մեզ իրագործել այն որոշումները (անվանական կրթաթոշակ, հուշատախտակներ), որոնք ընդունվել են նրա ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական նստաշրջանում:

ՊՐՈՖԵՍՈՐ Տ. ՋՐԲԱՇՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. О предварительных разведках серы, мрамора и барита. Отчет, 1927.
2. Месторождение инфузорной земли (трепелов). 1928.
3. Предварительный отчет о разведочных работах по пемзе в Сухофонтанском и Ахтинском районах. 1929.
4. Технический отчет геолого-разведочного пункта Ново-Николаевки на пемзу. 1929.
5. Технический отчет по Эларской геолого-разведочной партии. 1929.
6. Описание шурфов по изысканию пемзы Ахтинского геолого-разведочного пункта. 1929.
7. Описание шурфов по изысканию пемзы. Апаранский геолого-разведочный пункт. 1929.
8. Описание шурфов по изысканию пемзы. Каджаранский пункт. 1929.
9. Описание шурфов по изысканию пемзы. Макраванский и Дарачичагский районы. 1929.
10. Описание шурфов по изысканию пемзы. Нурнусский геолого-разведочный пункт. 1929.
11. Эларское месторождение пемзы. 1930.
12. Предварительный отчет по поисково-изыскательским работам на самоцветные камни в АрмССР. 1932.
13. Отчет Алагезской партии (обсидиан). 1932. Совместно с Б. Вартапетяном.
14. Предварительный отчет по изыскательским работам на нефть. 1933.
15. Докладная записка об осмотре залежей соли. 1934. Совместно с А. Енгояном.
16. Стратиграфическое расчленение верхнетретичных отложений Приериванского района и некоторые данные об их нефтегазоносности. «Известия» АН АрмССР. Науки о земле, 1969, N4.

ՏԻԳՐԱՆ ՋՐԲԱՇՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Տիգրան Արշակի Ջրբաշյանը ծնվել է 1889թ. նոյեմբերի 9-ին (22), Վան քաղաքում, հողագործի ընտանիքում:

1896-1902 թթ. Էրզրումի Արծնյան վարժարանի աշակերտ:

1902-1906 թթ. Վանի Երեմյան վարժարանի աշակերտ:

1908-1912 թթ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի սան:

1913-1914 թթ. Վանի Հայկազյան կենտրոնական վարժարանի ուսուցիչ:

1915-1916 թթ. Մոսկվայի Հայկական կոմիտեի Աշտարակի որբանոց-դպրոցի դաստիարակ:

1916 թ. Ջրբաշյանների ընտանիքը փոխադրվում է Թիֆլիս:

1916-1917 թթ. Հայկական բարեգործական ընկերության որբանոց-դպրոցի ուսուցիչ:

1917-1918 թթ. Ներսիսյան դպրոցին առընթեր գաղթականական դպրոցի ուսուցիչ:

1918-1920 թթ. Թիֆլիսի Անդրկովկասյան համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանող և պոլիտեխնիկական ինստիտուտի հանքաբանական կաբինետի լաբորանտ:

1920 թ. մեկնում է Փարիզ՝ բարձրագույն կրթությունը շարունակելու:

1920-1924 թթ. Փարիզի համալսարանի և հանքաբանական բարձրագույն դպրոցի ուսանող:

1924-1925 թթ. Փարիզի բնապատմական և հանքաբանական դպրոցի թանգարանների աշխատակից:

1925 թ. վերադառնում է Երևան:

1926-1934 թթ. Երևանի պետական համալսարանի երկրաբանության առարկաների դասախոս:

1926 թ. աշխատում է Ալավերդում որպես ինժեներ-երկրաբան, մասնակցում է Միության հանքաբանների խորհրդակցության աշխատանքներին:

1927-1937 թթ. կատարում է գիտահետազոտական աշխատանքներ Մերձերևանյան շրջանի երրորդական նստվածքների ուսումնասիրության և ոչ մետաղական օգտակար հանածոների որոնման, հայտնաբերման և հետախուզման բնագավառներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պրոֆեսոր Տիգրան Զրբաշյանի մասին

1. Թ.Թադևոսյան – Տիգրան Զրբաշյան. «Երևանի համալսարան», 23 նոյեմբերի 1960:
2. Լ.Ա.Ավագյան - Տիգրան Զրբաշյան: Հայկ. ԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», Երկրաբան. և աշխարհագր. գիտ., 14-րդ N2, 1961:
3. Լ.Պ.Ղարիբջանյան - Երևանի պետական համալսարանը. «Միտք» հրատարակչություն, Երևան,1965:
4. Լ.Ա.Ավագյան - Տիգրան Զրբաշյան: Հնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում: Գիտական աշխատությունների ժողովածու, 4-րդ, Երևան, 1967:
5. Լ.Ա.Ավագյան - Ականավոր երկրաբան-մանկավարժը: Հայկական ԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», Գիտություն երկրի մասին, 4, 1969:
6. Լ.Ա.Ավագյան - Երկրաբանական ֆակուլտետ: «Երևանի համալսարան», 5, 1969:
7. Վ.Հասրաթյան, Լ.Ավագյան - Երկրաբանական ֆակուլտետ, Երևանի պետական համալսարան: Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1970:
8. Մեր անվանի դասախոսները. առաջին մաս: Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1970:
9. Լ.Ա.Ավագյան - Երկրաբան Հովհաննես Կարապետյան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975:
10. Լ.Ա.Ավագյան - Բազմավաստակ երկրաբան-մանկավարժը (պրոֆ. Տ.Զրբաշյանի ծննդյան 100-ամյակի առթիվ). ԳԱ Տեղեկագիր, Գիտություններ երկրի մասին, հատոր XLII, 1989:

НЕУТОМИМЫЙ ГЕОЛОГ-ПЕДАГОГ
К 100-летию со дня рождения профессора Тиграна Джрбашяна

Знаменитый геолог-педагог профессор Тигран Джрбашян — один из видных деятелей периода формирования геологической службы Армении. Его очень короткая, но весьма плодотворная жизнь и деятельность оказали большое влияние на подготовку национальных кадров-специалистов, а также на изучение геологического строения и полезных ископаемых Армении. Он явился первым исследователем целого ряда минеральных ресурсов, первопроходцем нескольких научно-прикладных направлений геологии Республики. Особой заслугой Т.Джрбашяна является основание геолого-географического факультета Ереванского государственного университета.

Тигран Аршакович Джрбашян родился 9 ноября 1889г. в г.Ване (Западная Армения) в семье земледельца. Начальное образование получил в Санасарянском училище гор.Эрзрум и в Еремянской школе гор.Ван. Затем он переехал в г.Тифлис, где в 1908-1912гг. учился и закончил Нерсисянскую школу.

В 1912-1915гг. Т.Джрбашян работает учителем Центрального училища Айказяна в родном городе Ване.

В 1915г., спасаясь от геноцида, семья Джрбашянов переселяется в Ереван. В 1915-1916гг. Т.А.Джрбашян работает в Аштаракской школе сирот Московского армянского комитета.

В 1916г. семья Джрбашяна переезжает в г.Тифлис. Здесь в 1916-1917гг. он работает учителем в школе-сирот Армянского благотворительного общества, а в 1917-1918гг. — в школе-сирот для беженцев при Нерсисянской школе.

В 1918-1920гг. Т.Джрбашян учится на естественном факультете Закавказского университета и одновременно работает лаборантом кафедры минералогии Политехнического института у профессора Е.Гинзбурга. Богатый «мир камней» кабинета сыграл в его судьбе определяющую роль и он решил посвятить себя геологии и горному делу.

В 1920г. Т.Джрбашян уезжает в Париж и поступает в Сорбонну. Он посещает курсы по физико-математическим наукам, слушая таких выдающихся ученых как Альберт Эйнштейн, Мари-Кьюри Складовская и др. Затем он поступает в Парижскую горную академию, которую успешно заканчивает в 1925г. получив звание горного инженера.

Т.Джрбашян не удовлетворяется полученными в Горной академии знаниями и для их пополнения продолжает в Сорбонне слушать специальные курсы по геологическим дисциплинам. Одновременно он работает в Минералогическом кабинете Парижского естественно-исторического музея под руководством академика А.Лакруа и в палеонтологическом кабинете под руководством профессора Т.Боннэ.

Вскоре ему, как талантливому и перспективному специалисту предлагают остаться в Париже или поехать в Абиссинию консультантом-советником по геологии при правительстве. Однако тоска по Армении и заветная мечта служения родному народу, заставляют его вернуться в Армению.

В конце 1925г. Т.Джрбашян возвращается в Армению и в начале 1926г. он приглашается на работу в Ереванский государственный университет, в качестве лектора по геологии, кристаллографии и полезным ископаемым. За короткое время ему удается создать кабинет по кристаллографии и полезным ископаемым.

В 1929г. Джрбашяну присуждается звание доцента, а в 1935г. — профессора.

В 1934г. по инициативе Т.Джрбашяна совместно с выдающимся геологом доктором-профессором О.Карапетяном при содействии ректора Университета Тиграна Мушегяна, в Универсиетете создается геолго-географический факультет. Т.Джрбашян становится первым деканом этого факультета и одновременно заведующим кафедрой общей геологии, а также директором Научно-исследовательского института. Здесь проявились его блестящие способности научного работника, педагога и организатора учебного процесса. Он приложил большие усилия по созданию и расширению материльно-технической базы преподавания и развертыванию широкого фронта геолого-разведочных работ в Республике.

В условиях ограниченности квалифицированных кадров по специальным дисциплинам, Т.Джрбашян читает курсы лекций по геологии, кристаллографии, петрографии и методам разведки. Его завораживающие поучительные лекции основывались на большом педагогическом опыте и широких энциклопедических знаниях. До этого он ряд лет преподавал на педагогическом и сельскохозяйственном факультетах университета. А позже на строительном и химическом факультетах Ереванского политехнического института.

Профессор Т.Джрбашян сплачивает вокруг себя плеяду видных ученых и лекторов-профессоров: О.Карапетяна, О.Оганесяна, С.Лисициана; старших преподавателей: Г.Терзибашяна, П.Гамбаряна, О.Степаняна, Б.Вартапетяна, П.Оганесяна и др., обеспечивая тем самым высокий уровень преподавания геологических дисциплин.

Для организации теоретических и практических занятий Т.Джрбашян в соответствующих учреждениях Москвы, Ленинграда и Парижа, благодаря своим дружеским связям с геологами-преподавателями, приобретает для создания факультета микроскопы, коллекции пород и минералов, наглядные пособия. Многие из них используются до сегодняшнего дня в процессе преподавания и с любовью сохраняются, как частицы памяти о большом сподвижнике.

Летние месяцы 1935-1937гг. профессор Т.Джрбашян руководит учебной геологической практикой студентов в Приереванском районе с крайне разнообразным геологическим строением, преподает основы картирования, геологической съемки, составления разрезов, сбора, документации и обработки полевого материала.

Научно-педагогическая деятельность Т.Джрбашяна не ограничивалась чтением лекций, он проводил большую работу по составлению учебных программ, созданию специальных теоретических и практических пособий на армянском языке. Владея в совершенстве несколькими иностранными языками, Т.Джрбашян занимался переводами и терминологической работой. Заслуживает упоминания составленный им словарь геологических терминов и курс общей геологии на армянском языке, которые, к сожалению, не дошли до нас.

Заслуженный педагог явился воспитателем многих представителей старшего поколения геологической службы Армении. Многие из его студентов в настоящее время являюся известными представителями науки и производства республики. Старейшие лектора геологического факультета Ереванского государственного университета — его ученики: А.Габриелян, Т.Татевосян, В.Асратян, С.Бальян, Б.Вартапетян, А.Назарян, Л.Авакян, Ш.Шатворян, а также сотрудники Управления Геологии: П.Саргсян, А.Амроян, Т.Цоголакян и др. Профессор Т.Джрбашян был научным руководителем первых аспирантов в области геологических наук в Армении — С.Лусяна (вулканология) и С.Мовсесяна (петрография, металлогения).

Не менее плодотворной была научно-исследовательская и производственная деятельность профессора Т.Джрбашяна. Примерно в течение одного десятилетия он занимался исследованием геологического строения некоторых районов республики, изучением и разведкой ряда рудных полезных ископаемых. Он был одним из редких представителей нашей интеллигенции, который совмещал в своей деятельности научные и практические проблемы.

Еще в 1927г., когда доктор-профессор О.Карапетян возглавлял восстановительные и разведочные работы на медных месторождениях Армении (Алаверди, Кафан и др.), Т.Джрбашян сотрудничал с ним как

инженер-геолог, занимался вопросами направления геологоразведочных работ в Алавердских рудниках.

В 1927-1935гг. Т.Джрбашян работал в горном отделе Совнархоза Армении, а затем в Научно-исследовательском институте прикладной геологии и минералогии народного хозяйства Армении, а позднее, в 1935-1937гг., также и в Геологическом институте Армянского филиала Академии наук СССР в качестве научного сотрудника, горного инженера, консультанта, начальника поисково-разведочных отрядов.

В эти годы он разворачивает большие работы в Приереванском, Абовянском, Разданском районах Арм.ССР по обнаружению, изучению и использованию новых источников минерального сырья. Результаты этих работ обобщены в многочисленных отчетах, докладных записках и заключениях, часть из которых хранится в фондах Управления Геологии. Из них заслуживают упоминания отчеты по изучению месторождений вулканических песков, пемз, диатомитов (Элар, Ново-Николаевка, Сухой фонтан, Нурнус), оникса (Ахамзалу-Ахбаш), серы (Кетанлу), барита (Ахтала, Кохб), конгломератов (Джархеч), гипсов (Джрвеж), полудрагоценных камней (Иджеван), перлито-обсидианов (Талин) и т.д. Эти отчеты Т.Джрбашяна явились теми первоисточниками, которые выдвинули и обосновали ведущую роль и значение неметаллических полезных ископаемых для народного хозяйства Армении и получили самое широкое применение в наши дни.

Т.Джрбашян придавал большое значение систематическому планомерному изучению геологического строения и полезных ископаемых Армении. С этой целью он поддерживал и укреплял тесное творческое сотрудничество с ведущими учеными-геологами Москвы и Ленинграда – Ф.Левинсон-Лессингом, К.Паффенгольцем, П.Лебедевым, С.Кузнецовым, А.Турцевым, В.Котляром, В.Грушевым, и др., которые проводили исследования в бассейне оз.Севан., в перделах Арагацкого вулканического массива в Зангезурском, Алавердском рудных районах и внесли неоценимый вклад в создание научной геологической базы и геологической школы в Армении. Многолетние теплые, дружеские и весьма уважительные отношения сложились у него с В.Н.Лодочниковым и основоположником грузинской геологической школы, академиком А.И.Джанелидзе.

На основе детальных исследований геологии Приереванского района Т.Джрбашяном была составлена первая детальная схема стратиграфического расчленения третичных отложений, основанная на палеонтологических определениях, которая рассматривалась в качестве одного из классических эталонов для территории Юга СССР. Т.Джрбашян научно обосновал необходимость постановки в Приереванском районе разведочных работ на: туфы, базальты, каменную соль, гипсы, глины

перлиты, пемзы и т.д. Он неоднократно повторял, что геология Приереванского район «является тем ключом, который может открыть тайны, скрытые в третичных толщах республики, расширит целый ряд пока невыясненных и спорных вопросов». Т.Джрбашян первым выдвинул проблемы соленосности и нефтеносности этого района.

Значителен вклад Т.Джрбашяна в разрешение инженерно-геологических проблем, которые возникали в связи с расширением в республике промышленного и гражданского строительства. Будучи членом правительственных комиссий, он оказывал непосредственное содействие в работах проектных и строительных организаций, представлял докладные записки и инженерно-геологические заключения по участкам Ереванской ГЭС, Дзорагэс, по трассам Южного и Юго-Восточного оросительных каналов, по ликвидации последствий Горисского землетрясения 1931г., по оползневым участкам отдельных поселений и т.д.

Несмотря на то, что Т.Джрбашян не оставил ни одного опубликованного научного труда (из-за отсутствия в то время специальной периодической печати), его рукописное наследие и по сей день не потеряло своей актуальности и научного интереса. Более того, многие из его работ по теоретической постановке вопросов и практическим рекомендациям соответствуют современным требованиям и задачам геологии Армении.

Профессор Т.Джрбашян был активным общественным деятелем. Дважды, в 1930 и 1933гг., он избирался членом Исполкома Ереванского горосдкого совета депутатов. Он был делегатом III Всесоюзного съезда геологов (Ташкент, 1923г.) и делегатом 17-го Международного геологического конгресса (Москва, 1937г.). Неутомимый геолог, он был одним из активых распространителей геологических знаний в Армении, неоднократно выступал с докладами, посвященными вопросам полезных ископаемых, вулканизма, развития горнодобывающего производства, землетрясений и т.д. Т.Джрбашян был одни, из учредителей Армянского географического общества. Совместно с известными географами: О.Оганесяном, С.Лисицианом, Г.Кочаряном и др. он активно участвовал в мероприятиях, организуемых обществом, широко пропагандировал географические знания, призывал беречь водные и растительные ресурсы родной природы, придавая большое значение экологическим проблемам. В частности, он был большим противником проектов по спуску вод оз.Севан.

Т.Джрбашян был исключительно заботливым и человечным к своему окружению, к семье, своим коллегам и студентам. Он пользовался большой любовью и огромным уважением повсеместно. Его авторитет был очень высок в кругах творческой интеллигенции республики. Жители районов, с которыми ему часто приходилось общаться, с именем «нашего инженера» связывали большие надежды на обнаружение именно в недрах «их гор»

скрытых богатств и улучшение их благосостояния, а также на оказание реальной помощи детям в получении высшего образования, и они не ошибались в своих ожиданиях.

В 1935г., высоко оценивая научную, педагогическую и общественную деятельность Т.Джрбашяна, Центральный исполнительный комитет Армении наградил его Почетной грамотой.

Т.Джрбашян очень тяжело переживал трагические события массовых репрессий периода культа личности: убийство А.Ханджяна, чьим учителем был он в Ванской начальной школе, незаслуженные и непонятные аресты многих близких ему людей — профессоров, врачей, писателей, ученых.

Эта же трагическая участь не миновала и его самого. 30 августа 1937г. Т.Джрбашян вернулся в Ереван с экспедиционных работ, а ночью 31 августа он был арестован. Кристально честный, доброжелательный к людям, большой патриот был заклеймен «врагом народа» и стал жертвой жестоких репрессий. Лишь много лет спустя, в 1955г. Т.Джрбашян был посмертно полностью реабилитирован, и ему было возвращено доброе имя большого Человека и Гражданина.

В 1966г. по решению Министерства Высшего образования Арм.ССР кабинету общей геологии геологического факультета Ергосуниверситета присвоено имя Т.Джрбашяна.

В 1979г. по инициативе Клуба любителей камня Армении оганизуется торжественный вечер памяти Т.Джрбашяна и за большие заслуги в изучении полудрагоценных и поделочных камней и первые геологические исследования в Армении, он посмертно был избран почетным членом Клуба любителей камня Армении.

Знаменитый педагог-геолог Т.Джрбашян был представителем первого поколения периода становления геологической службы Армении, он сыграл большую роль в деле подготовки национальных геологических кадров республики.

Говорят, что учитель не стареет... Его светлый образ остается в памяти благодарных учеников и передается последующим поколениям. Незабываемым воспоминанием сохранилось в нашей памяти, как придет сейчас наш любимый учитель, придет с доброй улыбкой, ясным умом, в белом халате и с книгами в руках. Придет, чтоб продолжить прерванную лекцию, продолжить прерванную экспедиционную работу.

И сегодня его ученики и коллеги, геологи старшего поколения и все знающие его с признательностью вспоминают имя Т.Джрбашяна — большого гражданина и патриота, бесконечно преданного своему призванию и долгу.

10.12.1989г.

ՀՈՒՇԵՐ ՏԻԳՐԱՆ ՋՐԲԱՇՅԱՆԻ ՄԱՍԻՆ

ԹԱԴԵՎՈՍ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՏԻԳՐԱՆ ՋՐԲԱՇՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տ.Ջրբաշյանը Խորհրդային Հայաստանի երկրաբանական ծառայության հիմնադիրներից մեկն է և բեղմնավոր է եղել նրա գործունեությունը այդ ասպարեզում: Նա որոնողական-հետախուզական աշխատանքներ է կատարել շատ ընդարձակ տարածության վրա:

Սկսած 1927-1933 թվականը նրա ղեկավարած ջոկատը եղել է Խորհրդային Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում, հետազոտելով ոչ մետաղային օգտակար հանածոների հարյուրավոր հանքավայրեր և երևակումներ: Բազմաթիվ հանքավայրերի համար նրա տրված տեղեկությունները և նկարագրությունները լուրջ օգնություն են ցույց տվել հետագա հետազոտողներին, ավելի ընդարձակ հետազոտությունների ձեռնարկելու համար: Ջրբաշյանը որոնողական ու հետախուզական աշխատանքներ է ծավալել այն ժամանակ, երբ այսօրվա Հայաստանի տարածքի համար դեռևս չկային մանրամասն երկրաբանական քարտեզներ և երկրի երկրաբանական կառուցվածքի մասին հայտնի էին գերազանցապես ռեգիոնալ հետազոտությունների տվյալները:

Ջրբաշյանի աշխատանքներում ընդարձակ տեղեկություններ կան հետևյալ օգտակար հանածոների երևակումների և հանքավայրերի մասին, այն է պեմզայի, մարմարի, ծծմբի, աղի, այրվող թերթաքարերի, տրեպելների, բարիտի, օբսիդիանի, գունագեղ քարերի, ավազների և հրաբխային խարամների:

Առաջին աշխատանքները նա ձեռնարկել է 1927 թվականին, նվիրված ծծմբի երևակումների Արագածի շրջանում, բարիտի հանքայնացմանը Ալավերդու շրջանում և մարմարներինը՝ Արզաքանի շրջանում:

Ապարանում հետազոտելով ծծմբի հանքայնացման երևույթները և պեմզաների հանքավայրերը, Ջրբաշյանը հանգել է այն եզրակացության, որ հետագայում անհրաժեշտ է ձեռնարկել հետախուզական մանրամասն աշխատանքներ այդ նույն շրջաններում, որովհետև պեմզաների պաշարները կարող են ունենալ ժողովրդատնտեսական նշանակություն: Ապարանում, Ալիքուչակ գյուղի շրջակայքում նա հայտնաբերել է նաև գրաֆիտի և թերթաքարերի երևակումներ:

Այդ նույն տարում Թալինի շրջանում Զրբաշյանի ջոկատը Արտենի հրաբխի շրջանում ուսումնասիրել է օբսիդիանները և լիթոիտային պեմզաների շերտախմբերը: Նկատելով, որ օբսիդիանների լիթոիտային պեմզաների շերտերը հաջորդաբար ծածկում են իրար, Զրբաշյանը հանգում է այն եզրակացության, որ Արտենի հրաբուխը ունեցել է արտավիժման պուլսացիոն բնույթ, արտավիժելով երբեմն օբսիդիաններ և երբեմն էլ լիթոիտային պեմզաներ: Այդ նույն տարում արշավախումբը հետազոտական աշխատանքներ է տանում նաև Աղհամզալուի օնիքսանման մարմարի հանքավայրում, պարզելով մարմարի շերտերի հորիզոնականին մոտ տեղադրումը և նրա որակական առանձնահատկությունները, որոնք և հիմք են ծառայել այդ բացառիկ հանքավայրի հետագա ուսումնասիրման և շահագործման համար: Ի դեպ հարկ է նշել, որ այդ բացառիկ տարատեսակը օգտագործվեց շատ անտնտեսվար կերպով և շռայլվեց շատ հեշտությամբ:

Զրբաշյանի այդ տարվա աշխատանքների հաշվետվության մեջ խոսվում է նաև Իջևանի շրջանի կոնգլոմերատների և Ալավերդու բարիտի հանքավայրի մասին, նշելով Կույբիշևի կոնգլոմերատների առանձնահատկությունները:

Այս կամ այն հանքավայրի մասին Զրբաշյանի տված տեղեկությունները զուսպ են, դիպուկ, համոզիչ:

1928թ. Զրբաշյանը զբաղվում է տրեպելների հետազոտությամբ Արզնի, Արքել, Ձորագյուղ, Թեջրաբատ գյուղերի շրջաններում: Այդ օգտակար հանածոի երևակումների մանրամասն նկարագրությունից հետո նա հանգում է այն եզրակացության, որ անհրաժեշտ է որոշ գումար ծախսել համապատասխան փորվածքներ կատարելու համար, որպիսիք հնարավորություն կտան պարզելու այդ հանածոների թեկուզ մոտավոր պաշարները և հետագա շահագործման հնարավորությունը:

1929թ. Զրբաշյանի ձեռագիր աշխատանքները – հաշվետվությունը վերաբերվում է պեմզաների հանքավայրերի ուսումնասիրությանը Ախտայի շրջանում: Հաշվետվության տեքստում եղած շուրֆերի-փորվածքների նկարագրությունը, ուրվագծանկարները և բազմաթիվ թվական տվյալներ վկայում են, որ հետախուզական աշխատանքները տարված են երկրաբանական-գիտական համապատասխան մակարդակով և լրիվ պատկեր են տալիս հետազոտված հանքավայրի մասին: Նույն 1930 թվականին Զրբաշյանը հետազոտում է Էլարի (ներկայիս Աբովյանի), Միուբի և Ելղովան գյուղերի շրջանում հետազոտելով պեմզայի հանքավայրերը: Էլարում պեմզաները նստած են Աղմուզանի լեռների ավելի վաղ արտավիժած անդեզիտաբազալտների վրա, ինչպես այդ բանը պարզում է հետազոտողը, պեմզաներում

փորված խորը շուրֆերի հատակում հանդիպելով բազալտների: Այնուհետև նա նկատում է, որ պեմզաները նաև ծածկված են այդ նույն Աղմուղանից արտավիժած ավելի երիտասարդ բազալտներով: Հիշյալ հանքավայրերի պեմզաների շերտախմբերի առաջացումը Զրբաշյանը դիտում է որպես հետևանք Հատիս լեռան գործունեության, որին նախորդել են և հաջորդել Աղմաղանի բազալտների արտավիժումները, այսինքն իրարից գրեթե աննշան հեռավորության վրա երկրաբանական երրորդական և չորրորդական ժամանակներում գործել են թթու և հիմքային բաղադրության մագմատիկ ավազաններ:

Աշխատանքային վերոհիշյալ տարում, Զրբաշյանի ղեկավարած ջոկատը աշխատում է Ապարանում, Արա գյուղի շրջանում և Ծաղկաձորում, ուսումնասիրելով նույնպես պեմզայի հանքավայրերը:

1932թ. Զրբաշյանին հանձնարարվում է զբաղվել գունավոր տեխնիկական նշանակություն ունեցող քարերի հանքավայրերի որոնմամբ: Աշխատանքներ են ձեռնարկվում Սիսիյանի, Շամշադինի, Իջևանի, Լենինականի շրջաններում: Այդ տարվա որոնողական աշխատանքների արդյունքը լինում է քսանից ավելի տեղամասերում համապատասխան հումքի հնարավոր հայտնաբերումները, գլխավորապես ագատի և հասպիսների: Այդ տարիների տվյալները հետագայում հիմք են ծառայում Իջևանի շրջանում տուրոնի հասակի պորֆիրիտներում և նրանցից առաջացած բենտոնիտային կավերում բարձրորակ ագատի հանքավայրի հայտնաբերմանը: Այդ տարվա աշխատանքներին վերաբերող հաշվետվության մեջ տարբեր շրջաններում հիշատակվում են գունավոր երևակումների բազմաթիվ կետեր, որոնք հիմք են ծառայել հետագա աշխատանքների համար:

1933 թվին մասնագետների և պետական պաշտոնյաների մի հանձնաժողովում Զրբաշյանը զեկուցում է կարդում Հայաստանում աղի, նավթի և այրվող թերթաքարերի հանքավայրերի գոյության հնարավորության մասին:

Զեկուցման բազմակողմանի քննարկումից հետո Զրբաշյանին հանձնարարվում է ձեռնարկել համապատասխան որոնողական աշխատանքներ մերձերևանյան և հատկապես Ողջաբերդ գյուղի հարևանությամբ եղած տարածքում: Զրբաշյանը գտնում էր, որ անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ աշխատանքները.

1. Անհրաժեշտ է սկսել տվյալ շրջանի երկրաբանական մանրամասն ուսումնասիրությունից:
2. Անհրաժեշտ է ունենալ 1:5000 մասշտաբի տոպոգրաֆիական քարտեզ:

3. Անհրաժեշտ է շրջանում կատարել գեոֆիզիկական հետազոտություններ:
4. Շոր-ջրի կոչված ձորում անհրաժեշտ է կատարել խորը հորատում:
5. Աշխատանքները պետք է սկսել աղի ջրերի ելքի ձորում:

Աղի և նավթի հնարավոր հանքավայրերի որոնման աշխատանքներն ձեռնարկելուց առաջ Զրբաշյանը զբաղվում է համապատասխան գրականության ուսումնասիրությամբ:

Նա ծանոթանում է օտարերկրյա նավթագետ գիտնականների աշխատություններին (նա գիտեր անգլերեն և ֆրանսերեն լեզուներ), ցանկանալով իմանալ թե երկրաբանական ինչպիսի նախադրյալներ են հարկավոր նավթի կամ աղի հանքավայրերի որոնման համար:

1933 թվականից սկսվում են երկրաբանական աշխատանքներ ձեռնարկվել Կոտայքի և Վեդու շրջաններում: Այնուհետև առաջնությունը տրվում է Թեջրաբադ, Մանգյուս և Որջաբերդ գյուղերի շրջակայքին, պարզելու համար այդ վայրերում մերկացող նստվածքային առաջացումների երկրաբանական հասակը և տեկտոնական կառուցվածքը: Աշխատանքների սկզբում այդ վայրերի նստվածքներում հայտնաբերվել են ձկների դրոշմներ և այլ բրածոներ, որոնց ճշգրիտ որոշման համար դիմել են ճանաչված մասնագետ Բոգաչովին:

Զանգվի ավազանում, Քանաքեռգեսի ջրանցքի կավերում նույնպես հայտնաբերվում են ձկների դրոշմներ, իսկ Մանգյուս գյուղի մոտ հայտնաբերվում են աստրոկոդներ և Շոր-ջրի ձորում բրածոն, որը բնորոշ է վերին սարմատին: Մայրե Յամադ կոչված վայրում կորալային կրաքարերում և նրանց տակ եղած ավազաքարերում Զրբաշյանը հայտնաբերում է նումուլիտներ և գաստրոպոդներ: Հանրագումարի բերելով պալեոնտոլոգիական տվյալները և Բոգաչովի կոնսուլտացիաները Թեջրաբատի, Մանգյուսի և Ողջաբերդի ու հարևան շրջանների նստվածքների հասակի մասին, նրանց հասակը համարում է վերին երրորդական՝ սարմատ: Նույն շրջանում մերկացող կավերը և այրվող թերթաքարերը համարվում են միջին սարմատի գոյացումներ, իսկ օոլիտային կրաքարերը՝ վերին սարմատի առաջացումներ: Թեջրաբատի մոտ մերկացող դիատոմիտային գոյացումները որոշվում են որպես պլիոցենի հասակի առաջացումներ: Այդ տվյալներն էլ օգնում են որոշելու նույն վայրերում առաջացած ստորադաս և վերադաս բազալտների հարաբերական հասակը: Զրվեժ գյուղի մոտ մերկացող կոնգլոմերատները շրջանում մերկացող նստվածքներից ամենահինն են և գտնվում են պլիոցենում արտավիժած բազալտների տակ: Ավելի ուշ են առաջացել

Մանգյուս գյուղի մոտ մերկացող կավավազային կոնգլոմերատները: Նշված բոլոր տեսակի նստվածքային գոյացումներից ամենաերիտասարդը Զրբաշյանը համարում է Ողջաբերդ-Գեղարդի շրջանի կոնգլոմերատները, նրանց վերագրելով պլիոցենի հասակ: Ուսումնասիրվող շրջանում ծալքավորումները ձգվում են արևմուտքից հյուսիս-արևելք:

Մերերևանյան շրջանի երրորդական հասակի առաջացումների ստրատիգրաֆիան և տեկտոնական կառուցվածքը ուսումնասիրելը և լուսաբանելը Զրբաշյանի կարևորագույն ծառայություններից ամենակարևորն է: Այնուհետև շատ կարևոր են նաև նրա կանխատեսումները աղի հանքավայրերի գոյության մասին, որպիսիք արդարացան փայլուն կերպով: Վերջապես գիտական գնահատման է արժանի նաև նրա մանկավարժական ծառայությունը Երևանի համալսարանում, երկրաբանական ֆակուլտետի ստեղծման ասպարեզում: Զրբաշյանին աշակերտած հայ երկրաբանները մեծագույն հարգանքով և երախտագիտությամբ են հիշում նրան:

Զբաղվելով լիթոիդային պեմզաների և օբսիդիանների հանքավայրերի ուսումնասիրությամբ, նա առնչվել է նաև պեռլիտի հանքավայրերին, նշելով նրանց կարևորությունը որպես առաջնակարգ նշանակություն ունեցող շինարարական նյութեր: Մեր օրերում լրիվ արդարացել են Զրբաշյանի նաև այդ կանխատեսումները: Այսօր Հայաստանի պեռլիտի հանքավայրերը ամենահարուստն են ողջ Խորհրդային Միությունում: Բացի այդ, սքանչելի հումքի լավ տարատեսակները վաճառվում են օտար երկրների: Ժամանակակից քաղաքաշինության ասպարեզում պեռլիտների նշանակությունը շատ մեծ է:

ՏԻԳՐԱՆ ՋՐԲԱՇՅԱՆ

Հայաստանում երկրաբանական մտքի զարգացման գործում կարևոր ավանդ ունի Տիգրան Զրբաշյանը: Նա եղել է Հայաստանի ընդերքի, օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրության առաջին կազմակերպիչներից մեկը: Առանձնապես մեծ է Տ.Զրբաշյանի երախտիքը մեր հանրապետության երկրաբան կադրերի պատրաստման գործում: 1934թ. նրա նախաձեռնությամբ և համալսարանի ռեկտոր Տիգրան Մուշեղյանի աջակցությամբ կազմակերպվում է աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետ ,որի անդրանիկ դեկանը ինքը՝ Տ.Զրբաշյանն էր: Մինչև հիշյալ ֆակուլտետի բացումը նա երկրաբանական առարկաներ էր ավանդում համալսարանի բնագիտական ֆակուլտետում և պոլիտեխնիկական ու գյուղատնտեսական ինստիտուտներում:

Տիգրան Արշակի Զրբաշյանը ծնվել է 1889թ., Վան քաղաքում, ծառայողի ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է Էրզրումի Մանասարյան վարժարանում, ապա՝ Վանի Երեմյան դպրոցում: Հետագայում տեղափոխվում է Թիֆլիս և ընդունվում Ներսիսյան դպրոց, որն ավարտելուց հետո, 1912 թվականին վերադառնում է Վան և աշխատում հայրենի քաղաքի դպրոցներում: 1916թ. նա նորից մեկնում է Թիֆլիս, տեղի հայկական դպրոցներում դասավանդում է բնագիտական առարկաներ:

1919-1920թթ. Տ.Զրբաշյանը Թիֆլիսի համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանող էր և ուսմանը զուգահեռ հանքաբանական կաբինետի լաբորանտի պարտականություններով աշխատում էր տեղի պոլիտեխնիկական ինստիտուտում: Այստեղ է, որ նա հրապուրվում է երկրաբանությամբ և երկրաբան դառնալու ձգտումով: 1920թ. Տ.Զրբաշյանը մեկնում է Փարիզ, ընդունվում Սորբոնի համալսարան: Այստեղ նա ունկնդրում է Ա.Էյնշտեյնին, Մարիա Կյուրի-Սկլադովսկայային և ուրիշ նշանավոր գիտնականներին: Հետագայում Տ.Զրբաշյանը տեղափոխվում է Փարիզի լեռնային ինստիտուտը, որն ավարտում է 1924 թվականին՝ ստանալով լեռնային ինժեների որակավորում: Աշխատանքի ընդունվելով Փարիզի բնապատմական թանգարանում, նա երկրաբանությամբ է զբաղվում ակադեմիկոս Ա.Լաքրուայի ղեկավարությամբ և, միաժամանակ, շարունակում դասախոսություններ լսել Սորբոնի համալսարանում:

Օտար լեզուների իմացությունը, ձեռք բերած փայլուն գիտելիքներն ու մեծ աշխատասիրությունը Տ.Զրբաշյանին հնարավորություն էին ընձեռել

մնալու և աշխատելու Փարիզում: Սակայն նրան ձգում էին հայրենիքն ու հարազատները:

1925թ. Տ.Զրբաշյանը վերադառնում է Երևան և աշխատանքի անցնում Համալսարանում, որպես բնագիտական ֆակուլտետի երկրաբանական առարկաների դասախոս:

1929թ. Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատը նրան շնորհում է դոցենտի, իսկ 1935թ. պրոֆեսորի կոչում:

Տ.Զրբաշյանի գիտական գործունեության շրջանը ընդգրկում է 1925-1937 թվականները:

Ինժեներ-խորհրդատուի և արշավախմբի պետի պաշտոններով միաժամանակ աշխատելով ժողտնտխորհի լեռնային բաժնում և Կիրառական երկրաբանության ինստիտուտում, նա հետազոտում է մերձերևանյան շրջանների ոչ մետաղային օգտակար հանածոների հանքավայրերը: Նրա ձեռագիր հաշվետվություններից առավել կարևորները վերաբերվում են Կոտայքի և Հրազդանի շրջանների պեմզաների և դիատոմիտների ուսումնասիրությանը: Նա զբաղվել է նաև Աղամզալուի օնիքսատիպ մարմարների, Կողբի բարիտի, Զարխեջի կոմգլոմերատների, Զրվեժի գիպսի, Թալինի պեռլիտների և մի քանի այլ հանքավայրերի ուսումնասիրությամբ:

Մերձերևանյան շրջանի երրորդական հասակի նստվածքային ապարների ուսումնասիրությունը միշտ էլ եղել է Տ.Զրբաշյանի հետազոտությունների գլխավոր առարկան: Այստեղ կատարած պրպտումները նրան բերեցին այն համոզման, որ այդ տեղանքների ընդերքը պետք է որ պարունակի աղի և նավթի պաշարներ: Այսօր արդեն իրականացել են գիտնականի կանխագուշակումները. այդ վայրերում հայտնաբերված են բարձրորակ աղի վիթխարի պաշարներ:

Հանրապետության շինարարական կազմակերպությունները խոշոր օբյեկտներ և ջրանցքներ կառուցելիս ժամանակին Տ.Զրբաշյանից են ստացել նրանց երկրաբանական հիմնավորումները:

Տ.Զրբաշյանն աշխատել է նաև ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի երկրաբանական ինստիտուտում գլխավորելով Կոտայքի շրջանի արշավախումբը: Նրա կողմից ուսումնասիրված են նաև Ազատ և Հրազդան գետերի ավազանի նստվածքային գոյացումները, հատկապես նրանց ստրատիգրաֆիան:

Բազում ծրագրեր ու անելիքներ ուներ հայրենասեր գիտնականը, բայց նրանցից շատերը մնացին անավարտ. 1937-ին անժամանակ ընդհատվեց այս պայծառ մարդու այնքան բովանդակալից կյանքը:

Տ.Զրբաշյանը թողել է շուրջ 20 ձեռագիր աշխատություն, որոնք կատարված են ժամանակի գիտական բարձր մակարդակով և որոնցում հանված հիմնական եզրակացություններն ու սահմանված ստրատիգրաֆիական ստորաբաժանումները այսօր էլ պահպանում են իրենց գիտական արժեքը:

Ոչ պակաս ուշագրավ է Տ.Զրբաշյանի մանկավարժական գործունեությունը: Սկզբնական շրջանում համալսարանի գյուղատնտեսական և մանկավարժական ֆակուլտետներում, իսկ այնուհետև աշխարհագրաբանական-երկրաբանական ֆակուլտետում նա ավանդել է մի շարք առարկաներ, գլխավորապես բյուրեղագիտություն, միներալոգիա, պետրոգրաֆիա և ընդհանուր երկրաբանություն:

Տ.Զրբաշյանը մանկավարժական աշխատանքի նկատմամբ դրսևորում էր բացառիկ պարտաճանաչություն, բարեխղճություն և վարպետություն: Մանկավարժական հմուտ մոտեցմամբ ու գիտական հագեցվածությամբ աչքի ընկնող նրա դասախոսությունները լսվում էին մեծ հափշտակությամբ:

Այն ժամանակվա նյութա-տեխնիկական դժվարին պայմաններում նա կարողացավ ստեղծել կահավորված լաբորատորիաներ և կաբինետներ, դրանք հարստացնելով հանքատեսակների ու ապարների նմուշներով, բյուրեղների մոդելներով և մնացած անհրաժեշտ ուսումնա-ցուցադրական պարագաներով:

Ինքնամոռացության աստիճան աշխատանքով տարվելը, գործի նկատմամբ պատասխանատվության բարձր զգացումը, իր սաների հանդեպ դրսևորած հոգատարությունը նրա բնավորության հիմնական գծերն էին: Օրեր շարունակ բարկ արևի տակ Կոտայքի շրջանի լեռներում նա վարում էր ուսանողների դաշտային պրակտիկան, նրանց վարակելով դեպի ստանձնած գործն ունեցած սեփական պատասխանատվությամբ ու նվիրվածությամբ:

Տ.Զրբաշյանին լրջորեն մտահոգում էր նաև մայրենի լեզվով դասագրքեր ստեղծելու գործը: Նա օտար լոզուներից թարգմանում էր այս կամ այն առարկային վերաբերող հիմնական հատվածներ և մտադիր էր մշակված դասընթացներ ստեղծել ինչպես միներալոգիայի, նույնպես և մյուս առարկաների վերաբերյալ: Նրա թարգմանությամբ հայերեն լույս է տեսել Կրուբերի «Ընդհանուր երկրագիտություն» գրքի առաջին մասը:

Այսօր երկրաբանական գիտությունը Հայաստանում հասել է լուրջ նվաճումների, հրատարակվել են շատ գրքեր ու հոդվածներ, լույս են տեսնում մի քանի մասնագիտական պարբերականներ և այլն: Սակայն մինչև օրս մշակված չեն երկրաբանական տերմինալոգիայի հարցերը: Դեռևս իր

ժամանակին Տ.Զրբաշյանը մտահոգված էր այդ հարցով. նա մտադիր էր ստեղծել ռուս-հայերեն երկրաբանական բառարան և այդ ուղղությամբ կատարել էր զգալի աշխատանք:

Տ.Զրբաշյանը ակտիվ և ազնիվ քաղաքացի էր, հաճախակի դասախոսություններով հանդես էր գալիս հասարակության լայն շրջաններում, նպաստում էր բնագիտական գիտելիքների տարածմանը: Երկու անգամ նա ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր (1930-1933թ.), երկու անգամ՝ երկրաբանական համամիութենական համագումարի (Տաշքենդ, 1928թ.) և միջազգային 17-րդ երկրաբանական կոնգրեսի (1937թ. Մոսկվա) պատգամավոր:

Կարճատև է եղել Տ.Զրբաշյանի ծառայությունը թե համալսարանում, և թե Հայաստանում՝ ընդհանրապես: Բայց գործին առանց մնացորդի նվիրվելու և ինքնամոռաց աշխատելու նրա բնավորությունը հզոր դաստիարակչական գործոն է եղել, և դրանով պետք է բացատրել այն, որ ընդամենը մեկ-երկու տարի նրա սաները լինելու բախտին արժանացած մարդիկ մինչև այժմ մեծագույն հարգանքով ու երախտագիտությամբ են հիշում իրենց սիրելի ուսուցչի անունը:

Անվանի գիտնականի, ազնիվ քաղաքացու հիշատակը հավերժացնելու համար մեր համալսարանի ընդհանուր երկրաբանության կաբինետն այժմ կոչվում է նրա անունով:

«Երևանի Համալսարան», N6, 1970թ.

ԱՆՀԵՏԱՑԱԾ ԴԵՄՔԵՐ
ՏԻԳՐԱՆ ՋՐԲԱՇՅԱՆ

Վան-Այգեստանի Մեծ Քենտերչի թաղը կապրեին Ջրբաշյան երեք եղբայրները, որոնք Երամյան դպրոցի աշակերտներն էին:

Տիգրան, հակառակ իր հանդարտ և մեղմ բնավորության, Տաճատին գերյալ՝ նոր-սերնդական հնոցին մեջ ինկած էր: Լավ ձեռագիր ուներ, «Նոր սերունդ» խմորատիպ թերթ տպագիր ձեռագրով կը գրեր, մասամբ Միհրան Գալիկյանի օգնությամբ: Թերթի տպագրական ամեն աշխատանք կատարողը Տաճատն էր, որ Արսեն ուներ իր ձեռքին տակ: Իրենց տունին մեջ, վարձակալ էր պարսից հյուպատոսը ...: Արսեն կպատմեր, թե օրինակներ հանած ատեն, Տիգրան և Միհրան մեզի հետ կլլային: Տիգրան լուռ և համակերպող անուշություն մըն էր, Միհրան՝ գեղուն և ջինջ սիրտ մը:

Միջնեկն էր Տիգրանը, որ Հյուրիէթի հռչակումեն ետք Էրզրումի Սանասարյանը մեկնած էր և ավարտած: Վան վերադարձավ 1913-ին: Երեմյանի մեջ ամենեն սիրված աշակերտն էր Տիգրան, դասարանեն առաջիններեն և ամենեն ճարպիկը, իր այս հատկության, այլ և փոքր հասակին պատճառավ, **մկնիկ** անունը կուտային իրեն:

Կրտսերն էր Վաղարշակը, որ վերի կարգն էր, Օննիկ Մխիթարյանի և Գեղամ Երեմյանի դասարանը:

Տիգրան Ջրբաշյանին հետ մոտիկ բարեկամությամբ կապվեցա ես 1913-ին: Ան հրավիրված էր Ազգային Կեդրոնականի վերին կարգերու ուսուցիչ՝ բնագիտության և մաթեմատիկի, որոնց կը տիրապետեր հավասարապես: Այդ տարին, 1913, տեղի ունեցած Այգեստանի բոլոր թաղական մարմիններու նոր ընտրությամբ, դաշնակցության ձեռքը անցած էին ազգային բոլոր ծխական դպրոցները, այլև Ազգային Կեդրոնականը, որու հոգեբարձության ատենապետը դարձած էր Իշխանը և Կեդրոնականի տեսչությունն ալ հանձնված էր Գերմանիայեն նոր վերադարձած (Լեյբցիկեն) համալսարանավարտ, ճեմարանական Միհրան Թերլեմեզյանը:

Վերին աստիճանի լուրջ և համակրելի երիտասարդ էր Տիգրանը: Կը կրեր Սանասարյանեն բերած իր համազգեստը, որ շատ կը վայելեր իրեն. - սպիտակ պլուզ և երկար տապատ, մեջքեն հաստ լայն կաշե գոտիկով մը: Թեև խիստ վառվռուն և համակ աշխուժության՝ Տիգրան չուներ ոչ մեկ կուսակցական հետաքրքրություն: Ան որոշած էր գիտության նվիրվել բացառաբար և իր երազն էր շարունակել ուսումը Եվրոպայի մեջ և որպես գիտնական ծառայելու իր ժողովուրդին ու անոր ազգային-քաղաքական վերածնության:

Բոլորովին դեմ էր իմ հետևած ընթացքին՝ կուսակցական գործունեությանս, որ ժամանակի վատնում կը նկատեր: Կոմիտեություն, «դասախոսություններ, գործիչություն, այդ ամենը կրնան կատարել ուրիշներ ևս, քու տեղը Եվրոպական համալսարանն է, բարձրագույն կրթություն ձեռք բերելու համար», կսեր:

Հարատև աշխատող մըն էր Տիգրան, իր հետ բերած բազմաթիվ գրքերե բացի, պատվիրած էր Եվրոպայեն, գիտության հատորներ - երկրաբանական, քիմիական, կենսաբանական, որոնք կը «լափեր» սորվելու անհագ ծարավով, մինչև որ պատեհություն ունենար օր մը Եվրոպական համալսարանի մը մեջ կատարելագործելու ուսումը:

Այդ առիթը պիտի ներկայանար, սակայն բավականին ուշ:

1919 թվի աշնան, Եվրոպայեն դարձիս, Երևան կը հասնեի, նույն աշխույժ և գիտության ծարավով տարված երիտասարդն էր Տիգրանը: Կարծես թե պատերազմի վայրիվերումները իրեն համար եղած չլլային: Հաջողապես բոլորած էի ուսանողական տարիները և արդեն որպես ազատ մարդ կյանքի պայքարին համար. համալսարանի դասախոս, քաղաքական գործիչ, մամուլի աշխատակից. «Հիմա որ ժամանակն է ազատորեն գոհացում տալու քու նախասիրություններուդ, սիրելի Տիգրան» և իր մասին ալ կավետեր անհավատալի, վերին աստիճանի ուրախալի լուր մը: Ատիկա իր շուտափույթ մեկնումն էր Փարիզ, հանքաբանության հետևելու համար: Արդարև ալ քանի մը շաբաթներ ետք Տիգրան կուգար հրաժեշտ առնելու:

Տիգրանին հաջողված էր – Հայաստանի հանրապետության պատվիրակության ցույց տված նյութական և բարոյական աջակցությամբ - Ֆրանսայի հանքաբանական համալսարանը մտնել:

Ավարտից չորս տարի ետքը, Հայաստանի կառավարությունը բոլշևիկյան դարձեր էր: Երևան երթալու և հայրենիքին ծառայելու իր ամբողջական նվիրումին մեջն իսկ, բարեհուսությամբ չէր դիտվեր: Բայց Տիգրան ամեն զգուշուցումներու դիմաց, գնաց Երևան: Համալսարանի դասախոս նշանակվեցավ: Իր հոգեկան բերկրանքը, ավաղ, օրե օր տժգունեցավ: Բարեխիղճ, իր պարտականության ճամբուն, միայն ենթակա այդ մտավորական կարողության, չկրցավ խուսափել ժամանակի անճշտումներեն: Ինչպե՞ս եղավ և ինչպե՞ս հանգավ, ոչինչ չգիտեմ: Տիգրան ազնվական շաղախով հայորդի մըն էր, լավապես պատրաստված մտավորական մը, մեր ժողովրդի իմացական զարգացման ծառայելու կոչումով պատվական հայ մը*:

«ՎԱՐԱԳ», 1964, Հոկտեմբեր, N47

---

* Ստալինյան ռեժիմեն, շատերու հետ, ան ևս քշվեցավ Սիպիր և հոն «անհետացավ»...:

ՊՐՈՖԵՍՈՐ ՏԻԳՐԱՆ ԶՐԲԱՇՅԱՆԻ 90-ԱՄՅԱԿԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ Վ.Բ.ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Բարեկամներ!

Այսօր Հայաստանի քարասերների ակումբը նշում է հանգուցյալ պրոֆ. Տիգրան Զրբաշյանի ծննդյան 90-ամյակը: Սովետահայ ականավոր գիտնական, բազմավաստակ երկրաբան-մանկավարժ Տ.Զրբաշյանն իրավմամբ համարվում է Հայաստանի երկրաբանության մի քանի բնագավառների, ընդերքի մի շարք հարստությունների անդրանիկ հետազոտողը և Երևանի Պետական համալսարանի, մեզ բոլորիս հարազատ Երկրաբանական ֆակուլտետի հիմնադիրը: Անվանի գիտնականի բեղմնավոր գործունեությունը ճիշտ գնահատելու համար, թերևս, անհրաժեշտ է մտովին պատկերացնել այն իրադրությունը, որտեղ գործել է նա: Բարձր մասնագիտական գիտելիքներով զինված և հարազատ ժողովրդին ծառայելու նվիրական գաղափարներով վերադառնալով Հայաստան, Տ.Զրբաշյանը մուտք գործեց, ինչպես ասել է մեր անվանի գիտնականներից մեկը, «հերկեց մեր հանրապետու-

«Հայաստանի քարասերների ակումբի» պրոֆեսոր Տիգրան Զրբաշյանի ծննդյան 90-ամյակին նվիրված երեկո: Ամբիոնի մոտ է ՀՀ ԳԱԱ արվեստագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Զարյանը:

թան խոպանը, դարձավ նրա առաջին սերմնացանը, թողնելով գալիք սերունդներին առատ բերք...»:

Պրոֆեսոր Տ.Զրբաշյանի աշխատությունների թիվն անցնում է երկու տասնյակից: Չնայած դրանք գրված են չորս տասնամյակ առաջ, սակայն այսօր էլ չեն կորցրել իրենց թարմությունը և հետաքրքրությունը: Երկրաբանների ներկա սերնդի համար հիանալի ժառանգություն են հանդիսանում դրանք և կարող են օգտագործվել տարբեր հետազոտությունների բնագավառներում: Երկրաբանական վարչության ֆոնդերում պահվում են նրա հաշվետվություններից շատերը, որոնցից մի քանիսը մենք ներկայացրել ենք սրահի ցուցահանդեսում:

Մեր ակումբի համար հատկապես գնահատելի են պրոֆեսորի քարագիտության ասպարեզում կատարած հետազոտությունները: Բոլորիդ քաջ հայտնի է, որ մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը նրա ընդերքը հայտնի էր միայն մետաղական օգտակար հանածոներով, որոնք շահագործվում էին արտասահմանյան կապիտալի կողմից:

Ներկայումս մենք ձեռնամուխ ենք եղել ընդերքի կոմպլեքսային ռացիոնալ օգտագործմանը և առաջ ենք քաշել նաև ոչ մետաղային օգտակար հանածոների օգտագործման հարցերը:

Պրոֆեսոր Տ.Զրբաշյանն առաջին գիտնական-հետազոտողն էր, որ ուսումնասիրեց մեր հանրապետության ոչ մետաղային օգտակար հանածոները (դիատոմիտ, աղ, պեռլիտ, օբսիդիան, գիպս, ագաթ, կոնգլոմերատ, օնիքս), որով և հիմք դրեց հեմոլոգիական հետազոտություններին, հանդիսանալով նրա ռահվիրանը:

Ընկերներ, մեզ պրոֆեսոր Տ.Զրբաշյանից բաժանում է կես դար: Դա այնքան է, ինչքան ապրեց նա, այնքան է, ինչ տարիքի են նրա որդիները, մեր երկրաբանական ծառայության միջին սերնդի ներկայացուցիչները, որոնց, ցավոք սրտի, չհաջողվեց տեսնել ու լսել անվանի երկրաբանին ու մանկավարժին: Սակայն մենք ուրախ ենք, որ նրա փոքրաթիվ աշակերտները շարունակում են նրա սկսած գործը, բարձր են պահում իրենց ուսուցչի անունը և հիշատակը:

Տ.Զրբաշյանը հայտնաբերեց ոչ մետաղական օգտակար հանածոների, քարերի հանքավայրեր, հետախուզեց և հիմնավորեց դրանց գործնական նշանակությունը, թողնելով մեզ նրանց օգտագործման պատիվը: Եվ այսօր անվանի երկրաբանի հայտնագործումների հիման վրա գործում են հանրապետությունում մի շարք կազմակերպություններ (Արագած-պեռլիտ, «Հայբնագույնքարեր», «դիատոմիտներ», գաջի և շինանյութերի ձեռնարկություններ և այլն):

Տիկին Զրբաշյան, այսօր, Ձեր ամուսնու 90-ամյակի օրը, մենք Ձեզ և Ձեր հարազատներին հղում ենք մեր շնորհակալական խոսքը, քանզի Ձեր շնորհիվ փրկվեցին և մեզ հասան նրա մնացած սակավաթիվ և որոշակի արժեք ներկայացնող գործերը:

Թանկագին էդգար և Ռուբեն, մենք, Հայաստանի քարասերների ակումբի ներկայացուցիչներս, այս հանդիսավոր պայմաններում, Ձեր հոր քարագիտության բնագավառում կատարած ծառայությունների համար Ձեզ ենք հանձնում նրա «Քարասերների Հայկական ակումբի պատվավոր անդամի» դիպլոմը:

Ակադեմիկոս Ռուբեն Զարյանի առաջարկությամբ այդ դիպլոմը հանձնվեց Տիգրան Արշակի Զրբաշյանի ավագ թոռնիկին 11-ամյա Տիգրան Զրբաշյանին:

30.11.1979թ.
Երևան

«ՎԱՀԱԳՆ» ֆուտբոլային թիմը

1910 թվականից և հատկապես 1912-1913 թվականների ուսումնական տարվա սկզբներից Վանի միջնակարգ դպրոցների ֆիզկուլտուրայի դասատու Եղիշե Քաջունու ջանքերով կազմակերպվում է առաջին ֆուտբոլային խումբը՝ «Վահագն» անունով: Այն բաղկացած էր գլխավորապես Երեմյան և Կենտրոնական դպրոցների բարձր դասարանների աշակերտներից և մի քանի երիտասարդ ուսուցիչներից:

Ֆուտբոլի խումբը դպրոցի դասերից հետո կամ կիրակի և տոն օրերին մրցումներ էր կազմակերպում գլխավորապես Վանի «Ուրբաթ առու» կոչ-

Վանի «Վահագն» ֆուտբոլի թիմը:

ված ընդարձակ դաշտավայրում: Այնտեղ, որտեղ տեղի էին ունենում դպրոցական դաշտահանդեսներ, մայիսմեկյան տոնակատարություններ, զանազան խաղեր:

Նույն «Ուրբաթ առու» ընդարձակ դաշտը ուշ աշնանը լցնում էին ջրով և վերածում սառցադաշտի: Ձմեռվա ընթացքում այդ սառցադաշտից օգտվում էին բացառապես ամերիկացի ու գերմանացի միսիոներները, որոնք արևմուտքից իրենց հետ բերում էին սառույցի վրա սահելու հատուկ կոշիկներ՝ պողպատյա չմուշկներով: Հայ մարզասեր երիտասարդությունը կոշիկներ չուներ ու մնում էր միայն դիտողի դերում: Ձմեռվա ամիսներին ու հատկապես կիրակի օրերին սենսացիա էր սառույցի վրա տեսնել մեծ արագությամբ սլացող չմշկորդներին...

Ամառվա և աշնան ամիսներին «Ուրբաթ առուն» (հատկապես կիրակի օրերը) լեփ լեցուն էր լինում Վանի երիտասարդ երկսեռ հասարակությամբ, իսկ ֆուտբոլը, որպես նոր մարզախաղ, գրավում էր բազմաթիվ մարզասերների:

Ուշագրավն այն էր, որ այդ խաղն առաջին անգամ տեսնող ծերունիներից ոմանք պատմում էին, որ այն շատ հին ժամանակներում խաղացել են Վասպուրականում: Միայն թե կաշվե գնդակի փոխարեն օգտագործել են բրդյա կամ այլ կտորներից պատրաստված «թոփ» (գնդակ): Այդ խաղը հայտնի է եղել «ոտնագնդի» անունով:

Բացառիկ պատահականությամբ պահպանվել և ընթերցողին է ներկայացվում «Վահագն» ֆուտբոլային խմբի 17 անդամների լուսանկարը, որն արված է Վան քաղաքի Ակռփի արվարձանի ժայռերի մոտ, 1914թ. հուլիսին:

Այդ ֆուտբոլի խմբի կազմում ընդգրկված են եղել՝ Տիգրան Զրբաշյան (ձախից ամենավերևում), Եղիշե Քաջունի և ուրիշներ: Խմբի 17 անդամներից այժմ կենդանի են միայն երկուսը՝ Բենիամին Սապոնջյանը և Եղիշե Քաջունին:

«Երեկոյան Երևան», 17.03.1970թ.

Տիգրան Զրբաշյան՝ մեկը Վասպուրականի նշանավոր այրերից, որը զոհ է գնացել ստալինյան բռնություններին

Տիգրան Զրբաշյանը Հայաստանի երկրաբանական ծառայության նշանավոր երախտավորներից է, Երևանի Պետհամալսարանի աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետի հիմնադիրներից, որը մինչև իր ողբերգական մահը նվիրումով ծառայեց հայրենիքին, բացահայտեց լեռնաշխարհի ընդերքի գաղտնիքները՝ նրա հարստություններն ի նպաստ բերելով երկրի տնտեսության զարգացմանը:

Ծնվել է Վանում, 1889թ., տարրական կրթությունը ստացել էրզրումի Արծնյան, միջնակարգը՝ Վանի Երանյան վարժարանում, ապա Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որն ավարտելուց հետո, 1913-ին վերադառնում է հայրենի Վան և նշանակվում տեղի Հայկազյան Կենտրոնական վարժարանի ուսուցիչ: Սակայն վրա հասավ Մեծ Եղեռնը և Զրբաշյանների ընտանիքը թողեց հայրենի օջախը և փրկությունը գտավ Արևելյան Հայաստանում: Տիգրանը նախ սկսեց ուսուցչություն անել Աշտարակ որբանոց-դպրոցում, ապա Թիֆլիսի հայկական բարեգործական ընկերության և Ներսիսյան դպրոցի առընթեր որբանոց-դպրոցներում: Դասավանդում էր ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, բնագիտական առարկաներ: Մանկավարժական գործունեությանը զուգընթաց, սովորում է Թիֆլիսի Անդրկովկասյան համալսարանում, աշխատում պոլիտեխնիկական ինստիտուտի հանքաբանության կաբինետում, մասնակից դառնում նշանավոր պրոֆեսոր Գինզբերգի գործնական պարապմունքներին, որոնք էլ կանխորոշեցին տաղանդավոր վանեցի երիտասարդի ապագան:

1920 թվականին նա մեկնում է Սորբոն, սկզբում ունկնդրում մաթեմատիկական առարկաների գծով մի շարք բարձրագույն դասընթացներ ուսումնական հաստատություններում, ապա փոխադրվում է Փարիզի հանքաբանական ինստիտուտը: Այն ավարտում է 1924 թվականին, ևս երկու տարի ունկնդրում Սորբոնի համալսարանի նշանավոր մանկավարժ-գիտնականների դասընթացները՝ կիրառական երկրաբանություն, բյուրեղագիտություն, հանքաբանություն, ապարագիտություն, հետազոտման մեթոդներ և այլն: Եվ այսպես, զինված գիտելիքների, գիտագործնական աշխատանքի հարուստ պաշարով, վերադառնում է հայրենիք, նվիրվում գիտամանկավարժական գործունեությանը, Հայաստանի համար բարձրագույն կադրերի պատրաստմանը, նաև արժեքավոր ավանդ բերում երկրի տնտեսության

զարգացման գործում: Դասախոսում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի նորաստեղծ համապատասխան ֆակուլտետներում: Նրա նախաձեռնությամբ է ստեղծվում պետհամալսարանի աշխարհագրա-երկրաբանական ֆակուլտետը:

Գիտամանկավարժական գործունեությանը զուգահեռ Տիգրան Զրբաշյանը հսկայածավալ աշխատանք է կատարել Հայաստանի հանքահումքային աղբյուրների հայտնաբերման, դրանց պաշարների ճշգրտման ուղղությամբ: Նրա անվան հետ են կապված Հայաստանի աղերի, պեմզաների, դիատոմիտների, օնիքսի, կոնգլոմերատի և կիսաթանկարժեք քարերի մի շարք հանքավայրերի հայտնաբերումն ու հետախուզումը:

Տիգրան Զրբաշյանի կյանքի թելը կտրվեց նրա բազում գործունեության կիզակետում: 1937-ին նրան ձերբակալեցին և գնդակահարեցին որպես «ժողովրդի թշնամու», «ֆրանսիական լրտեսի»:

Ասենք, որ Տիգրան Զրբաշյանին հետմահու արդարացրին Ստալինի մահից հետո, այնուհետև հանրապետության մտավոր հասարակայնությունը, նրա երախտապարտ գործընկերները հնարավորություն ունեցան վերհանելու ականավոր մանկավարժի ու գիտնականի անունը, հրատարակելու նրա կենդանության օրոք այդպես էլ լույս չտեսած արժեքավոր աշխատությունները, կազմակերպելու նրա հիշատակին նվիրված միջոցառումներ, նշելու մեծ երախտավորի ծննդյան հոբելյանները: Նրա անունով կոչվեց Երևանի Պետհամալսարանի երկրաբանության ամբիոնը, հիմնվեց Տիգրան Զրբաշյանի անվան կրթաթոշակ, որը շնորհվում է ֆակուլտետի լավագույն ուսանողին: Իսկ այս աշնանը լրանում է Տիգրան Զրբաշյանի ծննդյան 110 տարին, որն այս անգամ գիտական հասարակայնությունը կնշի Հայաստանի Վասպուրական հայրենակցական միության հետ համատեղ ...

Երևան, 12/07/99թ.
«Վարագ» պարբերաթերթ Համավասպուրականի
Հայրենակցական միության, հ.47, 2000թ.

Պատառիկներ հայրիկիս կարճատև կյանքից

Հայրս, ականավոր երկրաբան Տիգրան Զրբաշյանը, Երևանի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտերի հիմնադիրներից էր, նրա առաջին պրոֆեսորներից մեկը:

Նրան վիճակվեց Հայաստանի մտավորական սերուցքի մի հատվածի դաժան ճակատագիրը: Նրան ձերբակալեցին 1937թ. օգոստոսի 31-ին, որովհետև նա ուսանել էր Ֆրանսիայում՝ Փարիզի աշխարհահռչակ Սորբոնի համալսարանում և ավարտել էր Փարիզի Լեռնային ինստիտուտը:

Նրա կյանքի այս փոքրիկ դրվագը, որին ուզում եմ հաղորդակից դարձնել ընթերցողին, վերաբերվում է Լեռնային ինստիտուտի շրջանավարտների ավարտական արարողությանը:

"Մեծ առաջնորդի" մահից հետո, 1953-55 թվերին, երբ սկսվեց պատմական "ձնհալքը", հայրս արդարացվեց առաջինների խմբում: Մայրս պատմում էր, որ արդարացումից մեկ-երկու տարի հետո համալսարանի, այսօր արդեն հին շենքի դիմաց, նրան կանգնեցրել է Համալսարանի տեսական մեխանիկայի ամբիոնի վարիչ, ճանաչված պրոֆեսոր Աշոտ Մովսեսի Տեր-Մկրտչյանը և պատմել հետևյալը.

1950-ական թվերին ինքը, Աշոտ Տեր-Մկրտչյանը, գործուղման մեջ է եղել Մոսկվայում: Իր ծանոթներից մեկի ընտանիքում խմբակային ճաշկերույթի ժամանակ զրուցել է իր կողքին նստած, բավականին հյուծված արտաքինով մի ընկերոջ հետ: Տեղեկանալով, որ իր խոսակիցը Հայաստանից է և Հայոց Համալսարանի պրոֆեսոր է, նա ծոցագրպանից հանել է բլոկնոտը և գտնելով Տիգրան Զրբաշյանի անուն ազգանունը, հետաքրքրվել է նրա բախտով, բացատրելով, որ ինքը ժամանակին սովորել է Տ.Զրբաշյանի հետ և նույնպես ավարտել է Փարիզի Լեռնային ինստիտուտը: Աշոտ Տեր-Մկրտչյանը, շատ լավ ճանաչելով հորս, հայտնել է, որ Տիգրան Զրբաշյանը 1937թ. զոհերից է, կենդանի չէ և հետմահու արդարացվել է 1955թ.: Այդ ընկերը, որ ազգությամբ հրեա էր և որի անուն-ազգանունը Աշոտ Տեր-Մկրտչյանը չի կարողացել հիշել, հայտնել է, որ ինքը նույնպես 1937թ. ձերբակալվել է և բախտի բերումով կենդանի մնալով, նոր է վերադարձել աքսորավայրից: Այնուհետև Աշոտ Տեր-Մկրտչյանը մայրիկիս վերապատմել է հրեա երկրաբանի պատմածը, որը բերվում է ստորև:

Փարիզի Լեռնային ինստիտուտում, ըստ սահմանված կանոնակարգի, շրջանավարտների դիպլոմային աշխատանքների պաշտպանության արա-

ղողությանը միշտ մասնակցել են Փարիզում տեղակայված տարբեր երկրների դիվանագիտական կորպուսների մասնագետներ: Նրանց իրավունք է վերապահվել տվյալ տարվա շրջանավարտներից ընտրություն կատարել՝ իրենց երկրներում աշխատելու համար: Ընտրողների կազմում եղել է նաև Հաբեշստանի ներկայացուցիչը: Նա չափազանց հավանել է հորս դիպլոմային աշխատանքի պաշտպանությունը և, քանի որ հայրս արտաքինով թուխ էր, թերևս՝ նման հաբեշի, առաջարկել է գնալ Հաբեշստան՝ որպես երկրաբան մասնակցելու նավթի պաշարների հետախուզական աշխատանքներին: Հայրս կտրուկ մերժել է առաջարկը: Այդ ժամ դիվանագետը սկսել է հորս հորդորել, խոստանալով նրան չափազանց լավ աշխատանքային պայմաններ և խիստ բարձր աշխատավարձ: Դիվանագետի երկար, բայց ապարդյուն խնդրանքներից հետո, նոր դիպլոմ պաշտպանած երիտասարդ Զրբաշյանը ձայն է խնդրում նախագահությունից և մոտենում ամբիոնին:

Ըստ հրեա երկրաբանի պատմածի, այդ ելույթը, որով նա փորձ է արել պատասխանել հաբեշ դիվանագետին, թե ինչու նա չի կարող ընդունել նրա այդքան հրապուրիչ հրավերը, փաստորեն վեր է ածվել հայ ժողովրդի դժվարին և ծանր պատմության փաստերի շարադրանքին, նրա դեմ գործած մեծագույն չարագործության՝ եղեռնի պատկերավոր ու տպավորիչ նկարագրին: Ցնունդով վանեցի, Մեծ Եղեռնի դժվարություններին ականատես և հրաշքով փրկված հայրս այնքան հուզիչ ու ոգևորված է խոսել, որ դասախոսներով և ուսանողներով լեփ լեցուն դահլիճը քար լռությամբ ունկնդրել է նրան: Ելույթն ավարտել է Հաբեշստանի ներկայացուցչից ներողություն խնդրելով նրան մերժելու համար, այն հիմնավորելով, որ ինքը նորաստեղծ իր փրկված հայրենիքին և ժողովրդին պարտավոր է վերադարձնել այն բոլորը, ինչը նա ստացել է Փարիզի Լեռնային ինստիտուտում սովորելու տարիներին: Հրեա երկրաբանի նկարագրությամբ, երիտասարդ Տ.Զրբաշյանի կրակոտ ելույթը և հատկապես նրա վերջն այնքան հուզիչ և տպավորիչ է եղել, որ դահլիճը կանգնած ծափահարել է նրան:

Այս միջադեպը խիստ տպավորվել է հրեա երկրաբանի հիշողության մեջ և տարիներ անց, Մոսկվայում, հանդիպելով Հայաստանի Պետական համալսարանի հարգարժան պրոֆեսորին, շտապել է հետաքրքրվել իր հայ ընկերոջ կյանքով:

Պրոֆեսոր Աշոտ Տեր-Մկրտչյանի հետ ունեցած այս հանդիպումից հետո մայիրկս հիշում էր, որ նախքան ծերբակալվելը հայրս հաճախ է կատակել, ասելով, որ ինքը հիմա կարող էր Հաբեշստանում լինել, առանց պատմելու ավարտական արարողության ժամանակ իր ելույթի մասին:

Նրա կարճատև, բայց արդյունավետ աշխատանքային գործունեությունը 1927-37 թվերին Երևանի Պետական համալսարանում, Պոլիտեխնիկական ինստիտուտում, ԽՍՀՄ ԳԱ Հայաստանի մասնաճյուղի երկրաբանական գիտությունների ինստիտուտում, երկրաբանական վարչությունում վկայում են այն մասին, թե ինչպիսի ոգևորությամբ, պատասխանատվությամբ և նվիրումի բարձր գիտակցությամբ է նա փոխանցել Փարիզում ստացած իր հիմնավոր և հիմնարար գիտելիքները հայ երիտասարդներին:

Խորհրդային Հայաստանի անվտանգության կոմիտեի նկուղներում հայրս ապրել է միայն 15 օր: Ըստ եղած տեղեկությունների, չդիմանալով խոշտանգումներին, նա վախճանվել է բանտում, սեպտեմբերի 16-ին:

«Վարագ» պարբերաթերթ Համավասպուրականի
Հայրենակցական միության, հ.47, 2000թ.

Երկրաշարժ

Հայրս՝ Տիգրան Զրբաշյանը, ծնունդով վանեցի էր, 1915թ. Մեծ Եղեռնից մազապուրծ՝ ընտանիքով հանգրվանել էր Երևանում: Մասնագիտական բարձրագույն կրթությունը ստացել էր Փարիզի Սորբոնի համալսարանում, որտեղ ունկնդրել էր աշխարհահռչակ ֆիզիկոսներ Ալբերտ Էյնշտեյնի և Մարի-Կյուրի Սկլադովսկայայի դասախոսությունները:

Ավարտել էր Փարիզի Լեռնային ինստիտուտը և բազմակողմանի գիտելիքներով զինված, 1926թ. Երևանի Պետական համալսարանի ղեկավարության հրավերով վերադարձել էր հայրենիք, նվիրվելով երիտասարդ սերնդի մասնագիտական դաստիարակության գործին:

Մեր ընտանիքը մինչև 1929թ. բնակվում էր Երևանի Բժշկական համալսարանի դիմացի երկհարկանի շենքում, որը Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հանրակացարանն էր:

Համալսարանի ղեկավարության միջնորդությամբ 1929թ. Հայաստանի կառավարությունը Տ.Զրբաշյանին հատկացնում է 3 սենյականոց բնակարան այսօրվա «Հայէներգոյի» շենքի բակում, այդ տարիներին Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) միջոցներով կառուցված եռահարկ շենքի երկրորդ հարկում:

Նշված ՀՕԿ-ի շենքն իր բնակիչների անվիճելի որակական կազմով կարծեք հավաքել էր հանրապետության մտավոր սերուցքը:

Այդ շենքում էին բնակվում գրողներ Դերենիկ Դեմիրճյանը, Վահան Միրաքյանը, Նաիրի Զարյանն ու Սողոմոն Տարոնացին, անվանի հայագետ-պատմաբան Մորուս Հասրաթյանը, ճանաչված դերասան Միքայել Մանվելյանը: Հետագայում Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ, հայտնի թատերագետ-շեքսպիրագետ Ռուբեն Զարյանը, թերմոդինամիկ-մեխանիկ Ալեքսանդր Հակոբյանը, կոմպոզիտոր-երգահավաք Սպիրիդոն Մելիքյանը, Սիմոն Հակոբյանը և ուրիշներ:

Հայրս սովորաբար ժամը 3-ի, 4-ի սահմաններում էր տուն վերադառնում: Ես անհամբեր սպասում էի նրան, քանի որ մի փոքր հանգստից հետո մենք պետք է «ձի-ձի» խաղայինք: Նա ինձ նստեցնում էր իր ուսերին և որովհետև մեր բնակարանի սենյակները հաջորդում էին միմյանց, ուստի լայն տարածք կար վազվզելու համար: Այդ մանկական խաղը, պետք է խոստովանեմ, հայրս կատարում էր մեծ սիրով և ոգևորությամբ:

1935թ. ամռան սկիզբն էր:

Այդ օրն էլ վազվզոցի պահին հանկարծ սկսեց ցնցվել բնակարանը՝ երկրաշարժ էր:

Հայրիկս մեկ վայրկյանում գնահատեց իրավիճակը և արագորեն մայրիկիս ու տատիկիս կանգնեցնելով դռների բացվածքների միջև, ինքն էլ ինձ հետ կանգնեց դրանցից մեկում: Ցնցումները կրկնվեցին:

Այդ տարվա երկրաշարժերը բավականին տևական էին և ցնցումները կրկնվում էին հաջորդ օրերի ընթացքում նույնպես: Վախից մարդիկ դուրս էին եկել իրենց բնակարաններից: Գիշերները քնում էին բակերում: Քնում էին քաղաքի կենտրոնական՝ այսօրվա Հանրապետության հրապարակում:

Կառավարության հանձնարարությամբ Տիգրան Զրբաշյանը մոտ մեկ շաբաթ, ամեն օր, օրը 2-3 դասախոսություն էր կարդում Կուլտուրայի տանը՝ այսօրվա Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահի լեփ լեցուն դահլիճում: Երևանի բնակիչներին ծանոթացնում էր երկրաշարժերի ծագման պատճառների, դրանցից պաշտպանվելու առաջին անհրաժեշտ քայլերին: Մայրիկս մի երկու անգամ ներկա է եղել այդ դասախոսություններին և պատմում էր, թե այնքան համոզիչ, հուսադրող էին նրա ելույթները, որ մարդիկ դահլիճից դուրս էին գալիս կարծես հանգստացած, թվում էր, թե երկրաշարժն արդեն նրանց համար այնքան սարսափելի չէ:

Ամիսներ անց, երբ մոռացվել էր երկրաշարժի սարսափը, մայրիկս ծիծաղելով պատմում էր, թե ինչպես արհավիրքի օրերին, ամեն անգամ աշխատանքից տուն վերադառնալիս, մեր բնակարանի դուռը սկզբում բախում էր Նարիր Զարյանը (նա ապրում էր մեր վերևի հարկում), իսկ ուշ երեկոյան, թատրոնից վերադառնալիս՝ Միքայել Մանվելյանը (նա Նաիրի Զարյանի հարևանն էր): Նրանք երկուսն էլ ներս չէին մտնում, ուղղակի դռների մեջ հարցնում էին Տիգրանը տանն է, թե ոչ: Եթե տանն էր, ուրեմն հանգիստ, անխոս բարձրանում էին իրենց բնակարանները: Եթե տանը չէր, ապա խիստ մտահոգված իջնում էին բակ և այնտեղ սպասում Տիգրանին: Կարծես Տ. Զրբաշյանը դարձել էր նրանց միակ հույսն ու ապավենը այդ ահավոր աղետից փրկվելու համար:

Մայրիկս պատմում էր, որ հետագայում, մեր տան հավաքույթների ժամանակ, հայրիկս անընդհատ հիշում էր այդ «պերմանենտ» երկրաշարժը և մեր երկու անվանի հարևաններին, կատակով պատմում էր նրանց այդ օրերի անբացատրելի սարսափի և դրա միամիտ լուծման «ուղիների մասին»:

Մեր շենքի բնակիչների հիմնական մասը, ինչպես նաև հայրիկս, զոհ դարձան 1937թ. «անհատի պաշտամունքին», նրանց բնակարանները զբաղեցրին ուրիշները: «Ժողովրդի դավաճաններ» հորջորջված գործիչների ընտանիքները ցրվեցին քաղաքով մեկ, հանգրվանելով խարխլակներում: Բայց նրանց միջև ջերմ հարաբերությունները պահպանվեցին տասնամյակներ: Նրանք հաճախ էին այցելում մայրիկիս՝ մեր նոր խղճուկ տնակում, որտեղ մինչև 1957թ. բնակվում էր մեր ընտանիքը՝ մայրիկս իր երկու զավակների հետ, և հուսադրում միմյանց՝ դիմակայելու ստեղծված դժվարին կացությանը:

Ես այսօր էլ մեծագույն երախտագիտությամբ եմ հիշում նրանց, ինչպես նաև նրանց, ում կողքով անցավ այդ արհավիրքը, ովքեր պահպանեցին իրենց արժանապատիվ կեցվածքը այդ մղձավանջային տարիներն:

Երևան
22.05.2001թ.

ОН БЫЛ ГЕОЛОГОМ
К 100-летию со дня рождения Т. А. Джрбашяна

Тигран Аршакович Джрбашян родился в г.Ване в семье земледельца. Начальное образование получил в школах Арцнян близ г.Эрзрума и Ерамян г.Вана. В 1908-1912гг. Учился и закончил школу Нерсисян в Тифлисе. С 1913 по 1918гг. Работал учителем математики, химии, физики и естествознаня в различных армянских школах, В 1917-1920гг. Т.Джрбашян продолжает учебу на естественном факультете «Закавказского частного университета». Одновременно был лаборантом минералогического кабинета Тифлисского политехнического института. Для продолжения высшего образования, в 1920г. он уезжает в Париж и поступает в знаменитую Сорбонну, где изучает курсы общей математики, минералогии, петрографии, палеонтологии, слушает лекции выдающихся ученых А.Эйнштейна и М.Склодовской-Кюри. Затем переходит в Парижский горный институт, успешно заканчивает его в 1924г. Получиж диплом горного инженера, Т.Джрбашян работает в минералогическом кабинете Парижского естественно-исторического музея под руководством академика А.Лакруа.

Однако тоска по Армении и заветная мечта служения родному народу заставляют талантливого и перспективного специалиста вернуться на Родину. С февраля 1926г. он приглашается в Ереванский государственный университет в качестве преподавателя кристаллографии и минералогии, а с 1928г. — также и общей геологии. В 1929г. в звании доцента он назначается на должность заведующего кафедрой минералогии и геологии. После реорганизации университета Т.Джрбашян преподает геологические дисциплины в ряде вузов республики.

В 1934г. по инициативе и при активном участии Т.Джрбашяна во вновь открывшемся госуниверситете создается геолого-географический факультет. Он становится его первым деканом, заведующим кафедрой общей геологии, а также директором научно-исследовательского института. Здесь полностью проявились незаурядные способности ученого-педагога и лучшие качества организатора учебно-воспитательного процесса. Для организации теоретических и практических занятий, расширения материально-технической базы факультета Т.Джрбашян из соответствующих учреждений Москвы, Ленинграда и из-за рубежа приобретает микроскопы, коллекции пород и

минералов, наглядные пособия. Им была проведена большая работа по составлению учебных программ, специальных теоретических и практических пособий, словаря геологических терминов на армянском языке. Постановлением центральной квалификационной комиссии научных работников при Наркомпросе Армении от 25 декабря 1935г. Т.Джрбашяну присваивается ученое звание профессора.

Заслуженный педагог воспитал многих представителей старшего поколения геологической службы Армянской ССР. Его ученики — академики АН республики А.Габриелян и А.Асланян, доктора наук С.Бальян, Б.Вардапетян, С.Мовсисян и другие.

Наряду с плодотворной педагогической деятельностью Т.Джрбашян проводил большую научно-исследовательскую и производственную работу. В течение примерно одого десятилетия он занимался изучением геологического строения и полезных ископаемых ряда районов Армении. В 1927-1937 годах Т.Джрбашян работал в Горном отделе Совета народного хозяйства Армянской ССР, в Армянском филиале Закавказского отделения Института прикладной минералогии, в Геологическом исннтитуте Армянского филиала АН СССР в должности горного инженера, консультанта, начальника поисково-разведочных отрядов и научного сотрудника. В эти годы он активно разворачивает большие работы по обнаружению, изучению и использованию новых источников минерального сырья в Приереванском, Абовянском, Разданском районах республики. Результаты его трудов обобщены в более чем двадцати научно-технических отчетах, докладных, записках и заключениях, посвященных изучению и описанию месторождений пемзы, диатомитов, вулканических песков, серы, барита, конгломератов, гипса, перлит-обсидианов и др. В них выдвинуты и обоснованы ведущая роль и значение неметаллических полезных ископаемых для народного хозяйства Армении, которые получили самое широкое применение и в наши дни.

На основе детальных исследований геологии Приереванского района Т.Джрбашяном была составлена схема стратиграфического расчленения третичных отложений, основанная на палеонтологических определениях, которая рассматривалась в качетсве одного из классических эталонов для территории юга нашей страны.

Значителен вклад Т.Джрбашяна в разрешение инженерно-геологических проблем, возникших в связи с расширением в республике промышленного и гражданского строительства. Будучи членом правительственных комиссий, он оказывал непосредственное содействие в работах проектных и строительных

организаций, представлял докладные записки и инженерно-геологические заключения по участкам Ереванской ГЭС, трассам Южного и Юго-Восточного оросительных каналов, по ликвидации последствий Зангезурского землетрясения 1931г., по оползневым участкам отдельных поселений и т.д.

Профессор Т.Джрбашян активно участвовал в общественной жизни республики. Дважды (в 1930 и 1933гг) избирался членом Ереванского горосдкого Совета, был делегатом 3-го Всесоюзного съезда геологов (Ташкент, 1928г.) и 17-го Международного геологического конгресса (Москва, 1937г.). В 1935г. ЦИК Армнии наградил его Почетной грамотой.

Вскоре он стал жертвой кровавых злодеяний палача. Ночью 31 августа 1937г. Т.Джрбашян был арестован после того, как в предыдуший день вернулся в Ереван с экспедиционных работ. 16-го сентября того же года его растреляли. Лишь много лет спустя, 9 июня 1955г. решением Прокуратуры СССР Т.Джрбашян посмертно был реабилитирован.

Память о Т.Джрбашяне свято хранят его сыновья — кандидаты наук Эдгар и Рубен, который пошел по стопам отца, став геологом, и ныне заведует лабораторией вулканологии Института геологических наук АН Армянской ССР.

10.12.1989г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պրոֆեսոր Տիգրան Զրբաշյան 3

Պրոֆեսոր Տիգրան Զրբաշյանի
աշխատությունների և
հաշվետվությունների ցանկ 32

Տիգրան Զրբաշյանի կյանքի և գործունեության
հիշարժան տարեթվերը 33

Неутомимый геолог-педагог
вместо резюме 35

Հուշեր Տիգրան Զրբաշյանի մասին 41

ՏԻԳՐԱՆ ՋՐԲԱՇՅԱՆ
Երկրաբան – մանկավարժը

Հրատարակության է ներկայացրել Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտը և հայկական աշխարհագրական ընկերությունը

Հրատարակության խմբագիր՝ Լ.Լ. Աղայան

Գեղարվեստական խմբագիր՝ Ն.Ա. Թովմասյան

Տեխն. խմբագիր՝ Հ. Հ. Խաչատրյան

Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Ս. Ղազարյան

Տպագրված է՝ «Լիմուշ» ՍՊԸ տպարանում
Երևան, Տերյան 72

ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍԻ ԱՎԱԳՅԱՆ

Ծնվել է 1914թ., Իգդիրում: Փրկվելով կոտորածից, հանգրվանել է Երևանում: 1939թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: Ուսանել է անվանի երկրաբաններ՝ Հ.Կարապետյանին, Տ. Ջրբաշյանին, Հ. Ստեփանյանին: Երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան:

Երկար տարիներ դասախոսել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետում, կարդալով հնէաբանության և պատմական երկրաբանության դասընթացները: Գիտական հետաքրքրություններն ընդգրկել են նաև չորրորդական ժամանակաշրջանի երկրաբանությունը: Կովկասի տարածաշրջանում մի քանի նախափղի (որը այժմ գտնվում է ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի Հ. Կարապետյանի անվան թանգարանում) հայտնագործողն է: Հեղինակ է չորրորդական երկրաբանության խնդիրներին առնչվող շուրջ 40 գիտական աշխատությունների: Կյանքի վերջին տարիներին զբաղվել է Հայաստանում երկրաբանական ծառայության և երկրաբանական գիտության զարգացման պատմությամբ և նրանց երախտավորների կենսագրականներով:

Վախճանվել է 1998թ., Երևանում: